

**Ընտանեկան բռնության
մասնագիտացված
աջակցության
ծառայությունները
Հայաստանում.
Կարողությունների,
որակի և շարունակական
բարելավման ապահովում**

Չեկույցն ուսումնասիրում է Հայաստանում
ընտանեկան բռնության մասնագիտացված
աջակցության ծառայությունները՝
անդրադառնալով ծառայությունների
արդյունավետությանը և բարելավման
ուղղություններին: Այն առաջ է քաշում
մի շարք խորհուրդներ և ներգրավված
կառույցների միջև համագործակցության
ձևաչափեր՝ միջազգային չափանիշներին,
այդ թվում՝ Ստամբուլի կոնվենցիան
համապատասխան, ինչպես նաև քննարկում
է այլ երկրների լավագույն փորձը:

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Ընտանեկան բռնության
մասնագիտացված աջակցության
ծառայությունները Հայաստանում.
Կարողությունների, որակի և
շարունակական բարելավ ման
ապահովում

Դիքի Չեյմս
միջազգային փորձագետ

Ազգային փորձագետ Գայանե Հովակիմյանի
մասնակցությամբ

Դեկտեմբեր 2024

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպայի
խորհրդի «Կանանց նկատմամբ
բռնության հաղթահարումը և
գենդերային հավասարության
ամրապնդումը Հայաստանում»
ծրագրի շրջանակներում:

Սույն զեկույցում Եվրոպայի խորհրդի
միջազգային և ազգային փորձագետների
կողմից արտահայտված կարծիքները
հեղինակների պատասխանատվությունն
են և կարող են չարտացոլել
Եվրոպայի խորհրդի պաշտոնական
քաղաքականությունը:

Շապիկի ձևավորում և դիզայնը
Բրենդոն ՍՊԸ

Եվրոպայի խորհուրդ
F-67075 Strasbourg Cedex

www.coe.int
© Եվրոպայի խորհուրդ, դեկտեմբեր 2024 թ

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ և ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒՄՆԵՐ	4
ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ	5
Ընտանեկան բռնություն	5
Ընտանեկան բռնությունը Հայաստանում	5
Չեկոյցը և դրա կառուցվածքը	6
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	8
ԲԱԺԻՆ 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՐՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԳՎԱԾ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	10
Նախադրյալներ և զարգացում	10
Հայաստանում օրենսդրական փոփոխությունները	11
ԸԲՄԾ-ն և պայմանագիրը ԱՍՀՆ-ի հետ	12
ԸԲՄԾ-ի մշտադիտարկում	14
Մշտադիտարկման չափորոշիչները	15
ԲԱԺԻՆ 2. ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԸԲՄԾ-ՈՒՄ	17
Ընտանեկան բռնության զոհերի համար մասնագիտացված աջակցության ծառայությունների չափորոշիչների գնահատում և մշտադիտարկում	17
Ստամբուլի կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության զոհերի աջակցության ծառայությունների նվազագույն չափորոշիչներից բխող մասնագիտացված ծառայությունների հիմնական սկզբունքները	17
ԸԲՄԾ-ն Հայաստանում	19
ԲԱԺԻՆ 3. ԸԲՄԾ -Ի՝ ԻՐԵՆՑ ՏԱՐԱԾԱՇԻՋԱՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	23
ԲԱԺԻՆ 4. ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ	27
Ընտանեկան բռնության զոհերի աջակցության ծառայությունները և գործընկերային աշխատանքը Հայաստանում	28
Միջգերատեսչական համագործակցության ամրապնդումը	32
Միջգերատեսչական համագործակցության վրա հիմնված աշխատանքի վերաբերյալ առաջարկություններ	33
ԸԲՄԾ -ի և այլ գերատեսչությունների՝ ոստիկանության և ՄՍԾ-ի պարտականությունները	33
ԲԱԺԻՆ 5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՈՒՄՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ	35
Առաջարկություններ, խորհուրդներ և օրինակներ	35
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	49
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ	50

Հապավումներ և համառոտագրումներ

ԸԲՄԾ	Ընտանեկան բռնության մասնագիտացված ծառայություններ
ԱՍՀՆ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն

Ամփոփ նկարագիր

Ընտանեկան բռնություն

Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի և «ՄԱԿ-Կանայք» կազմակերպության կողմից կատարված ուսումնասիրությունը (2022թ.) ցույց է տալիս, որ 2021թ-ին յուրաքանչյուր ժամը մեկ աշխարհում միջինում ավելի քան 5 կին կամ աղջիկ է սպանվում իր ընտանիքի անդամի կողմից: Այդ տարի դիտավորությամբ սպանված կանանց և աղջիկների շուրջ 56 տոկոսը սպանվել է զուգընկերոջ կամ ընտանիքի այլ անդամի կողմից (81,100-ից 45,000-ը), ինչը փաստում է, որ բազմաթիվ կանանց և աղջիկների համար ընտանեկան միջավայրը ապահով վայր չէ: Ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների խորը արմատացած, լայն տարածում ունեցող խախտում է: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գնահատումներով՝ աշխարհում յուրաքանչյուր երրորդ կին իր կյանքի ընթացքում ընտանեկան բռնության է ենթարկվում (2021թ.): Կանանց և երեխաների վրա ազդեցությունը խորքային և տարածված է՝ ֆիզիկական և հոգեկան առողջության, կրթական նվաճումների, սոցիալական կարողությունների և տնտեսական ներառման առումով: Երեխաների համար ընտանեկան բռնության միջավայրում ապրելու հետևանքները նույնպես վնասակար են հոգեկան, զարգացման, կրթական և ֆիզիկական առողջության համար (ԱՀԿ, 2021թ), և հետազոտության արդյունքները փաստում են, որ ընտանեկան բռնության միջավայրում մեծացած երեխաների կողմից հասուն տարիքում բռնություն գործադրելու հավանականությունը ավելի մեծ է (Guedes et al, 2016թ.):

Չնայած անհատների և ընտանիքների վրա ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության ազդեցությունը խորապես վնասակար է, առկա է նաև ազդեցություն հասարակությունների և պետությունների վրա՝ իրենց սոցիալական և տնտեսական ներուժին հասնելու կարողության առումով:

Կանանց նկատմամբ բռնությունը ինչպես գենդերային անհավասարության պատճառն է, այնպես էլ դրա հետևանքը, ինչի պատճառով մարդու իրավունքների այս խախտման դեմ պայքարը և դրա կանխարգելումը տեղի են ունենում գենդարեյին անհավասարության դեմ պայքարի և դրա կանխարգելմանը, ինչպես նաև կանանց սոցիալական, մշակութային և տնտեսական հզորացմանը զուգընթաց: Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի գնահատականների, երբ հասարակություններում կանայք զերծ են այս անհավասարությունից, այդ հասարակություններում 35 տոկոսով ավելի մեծ է տնտեսական արտադրողականության աճի հավանականությունը:

Ընտանեկան բռնությունը Հայաստանում

Ընտանեկան բռնությունը մինչ օրս Հայաստանի ամենալուրջ սոցիալական խնդիրներից մեկն է («Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա» (CEDAW, 2016թ.): Ըստ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) քննչական կոմիտեի՝ 2022 թ-ի առաջին կիսամյակում քննվել է ընտանեկան բռնության 391 գործ, որոնցից 8-ը սպանություններ էին, որոնցից 1-ը անգոլշույթով՝ պատճառված մահ էր, իսկ 183-ը բռնության դեպքեր էին, 11-ը եղել են ուժեղ ֆիզիկական ցավի պատճառման կամ հոգեկան առողջությանը վնաս պատճառելու դեպքեր, 51-ը՝ սպանության կամ առողջությանը կամ գույքին ծանր վնաս պատճառելու սպառնալիքներ:

2022 թ-ին Հայաստանում 16 կնոջ սպանություն գրանցվել է որպես ընտանեկան բռնության հետևանքով սպանություն (Խաչատրյան, 2023թ.): Հաշվի առնելով, որ ընտանեկան

բռնությունը առավել լատենտային հանցագործության տեսակներից է, հնարավոր է, որ այս թվերն արտահայտում են դրա տարածվածության միայն մասնակի պատկերը:

Վերջին տարիներին Հայաստանի կառավարությունը սկսել է հասցեագրել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության խնդիրները: 2018 թ-ի հունվարին Հայաստանը ստորագրել է Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցա)՝ պարտավորվելով ընտանեկան բռնության դեմ միջոցներ ձեռնարկել քաղաքականության և օրենսդրության փոփոխությունների, իրազեկման արշավների և ԸԲՄԾ-ի զարգացման միջոցով:

ԸԲՄԾ-ի ստեղծումը Ստամբուլի կոնվենցիայի պաշտպանության հիմնասյունի տիրույթում է, և տվյալ զեկույցի հիմնական ուղղվածության կենտրոնում է:

Չեկույցը և դրա կառուցվածքը

Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը» ծրագրի շրջանակում Եվրոպայի խորհրդի կողմից նախաձեռնված այս զեկույցը հրապարակվել է ի պատասխան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (որը պատասխանատու է Հայաստանում ԸԲՄԾ-ի մշտադիտարկման և ֆինանսավորման համար) բարձրացրած որոշ հարցերի և մտահոգությունների: ԸԲՄԾ-ի զարգացմանը և հաստատմանը զուգընթաց ԱՄՆ-ն անդրադարձել է մի քանի խնդիրների՝ հնարավոր զարգացման և բարելավման տեսանկյունից:

- ԸԲՄԾ-ի մատուցած ծառայությունների գնահատման համակարգի զարգացում:
- Յուրաքանչյուր ԸԲՄԾի՝ իր տարածաշրջանում ընտանեկան բռնության բոլոր դեպքերով զբաղվելու կարողություն (բոլոր մարզերի չափերը/ժողովրդագրական կազմերը տարբեր են):
- ԸԲՄԾ-ի և մարզերում աջակցության այլ ծառայությունների միջև համագործակցության մակարդակը, մասնավորապես Միասնական սոցիալական ծառայությունների (ՄՍԾ) հետ հարաբերությունները, որը կենտրոնական և տարածաշրջանային մակարդակներում պետական պաշտպանության ազգային հիմնական ծառայությունն է:
- ԸԲՄԾ-ի և այլ ծառայությունների, մասնավորապես ոստիկանության և ՄՍԾ-ի պարտականությունները:

Խնդրահարույց այս ոլորտների ուսումնասիրության նպատակով տվյալ զեկույցը սկսվում է ԸԲՄԾ-ի ամփոփմամբ՝ մշտադիտարկման և գնահատման բարելավման, ինչպես նաև հավատարմագրման համակարգերի ստեղծման առաջարկություններով: Այնուհետև անդրադարձեկատարվում ԸԲՄԾ-ի կարողություններին՝ դրանց զարգացման և ձևավորման առաջարկություններով: Երրորդ բաժինը կենտրոնանում է համագործակցության և գործընկերային աշխատանքի շուրջ, ինչպես նաև անդրադառնում է ԸԲՄԾ և այլ ծառայությունների, օրինակ՝ ոստիկանության և ՄՍԾ-ի միջև պարտականությունների բաշխման խնդրին:

Չեկույցը ԸԲՄԾ -ի ուժեղ և թույլ կողմերը գնահատելու համար որպես հիմնական ձևանմուշ օգտագործում է Եվրոպայի խորհրդի՝ աջակցության ծառայությունների նվազագույն չափորոշիչները և հիմնվում է միջազգային ստանդարտների, մասնավորապես՝ Ստամբուլի կոնվենցիայի վրա:

Չեկույցի հինգերորդ բաժինը ավելի խորքային անդրադարձ է կատարում այս առաջարկություններին՝ օգտագործելով այլ երկրներում և համատեքստերում դրանց

գործածության օրինակները: Այս բաժնի նպատակն է ներկայացնելով այս օրինակները և առաջարկները՝ օգնելու ԱՍՀՆ-ին դիտարկել հավանական փոփոխությունները կամ զարգացումները, որոնք կարող են համապատասխանեցվել Հայաստանում ընտանեկան բռնության զոհերի առանձնահատուկ մշակութային և ժողովրդագրական կարիքներին և ԸԲՄԾ-ի զարգացմանը:

Մեթոդաբանություն

- Հայաստանում ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծություն

Չեկույցը ներառում է ԱՄՆ-ի կողմից ԸԲՄԾ-ի վերաբերյալ հավաքած տվյալները: Այն նաև ընդգրկում է ԸԲՄԾ-ի գործունեության տարբեր տարածաշրջանների ժողովրդագրական տվյալների վերլուծություն:

- 2024 թ-ի ապրիլին միջազգային փորձագետի՝ Եվրոպայի խորհրդի և մի շարք կառույցների հետ համագործակցությամբ Հայաստան կատարած փաստահավաք այց

Համագործակցող կառույցների հետ անցկացվել է մի քանի խորքային հանդիպում: Դրանց մասնակցել են ԱՄՆ-ի, ինչպես նաև ոստիկանության ղեկավար կազմի ներկայացուցիչներ: ԸԲՄԾ-ի ներկայացուցիչների մեծ մասի՝ հետ նույնպես անցկացվել է քննարկում, որը նրանց ընձեռել է իրենց աշխատանքում առկա մարտահրավերներն ու ձեռքբերումները և խոչընդոտները մատնանշելու հնարավորություն: Դրանից բացի, այցելություններ են կատարվել Երևանի ԸԲՄԾ և Տավուշի մարզային մեկ ԸԲՄԾ կենտրոն: Մեթոդաբանության այս որակական բաղադրիչը ներառում էր նաև հետագա առցանց հանդիպումներ շահագրգիռ կառույցների հետ: Աշխատանքի այս բաղադրիչի համար հարմարեցված հիմնական մեթոդաբանական գործիքը Եվրոպայի խորհրդի կողմից մշակված «Կանանց նկատմամբ բռնության զոհերի աջակցության ծառայությունների քարտեզագրում՝ Ստամբուլի կոնվենցիայի չափանիշներին համապատասխան» (2018թ.) ձեռնարկն էր:

- Նախապատրաստական աշխատանք/գրականության ուսումնասիրություն

Մեթոդաբանության այս բաղադրիչը ներառել է քաղաքականության մշակման, Եվրոպայի խորհրդի կողմից Հայաստանում մինչ այս կատարված աշխատանքի, ազգային օրենսդրական դաշտի և ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության ազգային տվյալների ուսումնասիրությամբ պատկերացումների ձևավորում: Այն նաև ներառել է երկրի վերաբերյալ միջազգային տվյալների ուսումնասիրություն: Նախնական աշխատանքը նաև ընդգրկել է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, որը կարող է օգնել Հայաստանում ԸԲՄԾ-ի գործելաժողովի և այլ ծառայությունների հետ համատեղ աշխատանքի բարելավման գործում:

- Միջազգային չափորոշիչներ

Չեկույցի համար հավաքված բոլոր հետազոտությունները հիմնված են ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության աջակցության ծառայությունների միջազգային չափորոշիչների վրա: Սա առաջնահերթ ներառում է Ստամբուլի կոնվենցիան և, մասնավորապես, այն բաղադրիչները, որոնք նախատեսում են, թե ինչ է պահանջվում մասնագիտացված աջակցության ծառայություններից, ինչպես նաև այլ ծառայություններից՝ մասնագիտացված ծառայությունների և զոհերի հետ աշխատելիս՝ օրենսդրության, ծառայությունների տրամադրման և գործելակերպերի առումով: Չեկույցն օգտագործում է նաև Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության զոհերի աջակցության ծառայությունների նվազագույն չափորոշիչները» (2008 թ.):

Ստամբուլի կոնվենցիան և հարակից փաստաթղթերը, ինչպիսիք են Կոնվենցիայի բացատրական զեկույցը, ինչպես նաև նվազագույն չափորոշիչները, հիմք են ծառայել Հայաստանի ԸԲՄԾ մոդելի մշակման վերաբերյալ առաջարկությունների համար: Այս

փաստաթղթերը ընտանեկան բռնության գոհերի համար նախատեսված ծառայություններին և այլ շահագրգիռ կողմերին տրամադրում են ընդունված լավագույն փորձի, շարունակական զարգացման ձգտումների և որակի հետևողականության վերաբերյալ ուղեցույցներ:

Բաժին 1. Ընտանեկան բռնության մասնագիտացված աջակցության ծառայությունները Հայաստանում

Նախադրյալներ և զարգացում

Հայաստանում ԸԲՄԾ-ի ստեղծումը լավագույնս կարելի է հասկանալ 2017թ-ին ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համատեքստում: Այն Հայաստանում առաջին իրավական մեխանիզմն էր, որը կենտրոնացած էր հատկապես ընտանեկան բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց պաշտպանության վրա: Այս օրենքի ընդունումը նշանակալի առաջընթաց էր ընտանեկան բռնության գոհերի պաշտպանության ուղղությամբ, ներառելով «լիազոր մարմնի» պարտավորությունը՝ ապահովելու, որ Հայաստանի բոլոր մարզերում հասանելի դառնան ընտանեկան բռնության աջակցության ծառայությունները: Արդյունքում, այս ծառայությունների ֆինանսավորման և մշտադիտարկման գործառույթն այժմ վերապահված է ԱՍՀՆ-ին:

ԸԲՄԾ-ի մոբիլիզացումը իրականացվել է մի շարք կառույցների և ընտանեկան բռնության ծառայություններ տրամադրող ՀՀ-ների հետ խորհրդակցությունների միջոցով, այդ թվում՝ Երևանում արդեն հիմնադրված Կանանց աջակցման կենտրոնի, որն ունի ուժեղ ազգային ու միջազգային հեղինակություն և նաև հետազոտական աշխատանքի իրականացման ուղղվածություն: Որպեսզի ապահովվի ծառայությունների մատուցումը բոլոր մարզերում, որոշ գործող ՀՀ-ներ, որոնք նախկինում մասնագիտացած չէին ընտանեկան բռնության ոլորտում, զարգացրեցին իրենց կարողությունները, իսկ մյուսները արդեն ձևավորվեցին որպես ընտանեկան բռնության մասնագիտացված ՀՀ-ներ: Չարգացման գործընթացում մեծածավալ աշխատանք է կատարվել ծառայությունների համակարգման ամրապնդման ուղղությամբ, այդ թվում՝ հիմնադրվել է «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան: Այս կոալիցիան հնարավորություն է տալիս ԸԲՄԾ-ին կիսվել գիտելիքներով և համատեղ մտահոգություններ ուղղել պետական մակարդակում, ինչպես նաև արշավներ իրականացնել գոհերի շահերից ելնելով: Այն նաև ծառայություններին հնարավորություն է ընձեռնում աշխատել միասին՝ վերապատրաստման և իրենց աշխատանքի որակի ստանդարտացման հարցերում:

Հատկանշական է, որ կարճ ժամանակահատվածում ԸԲՄԾ-ի մոբիլիզացումը ոչ միայն զարգացրել է տարածաշրջանային ՀՀ-ների կարողությունները, այլև ցույց է տվել նոր օրենքի և Հայաստանում ընտանեկան բռնության կանխարգելման և գոհերի կարիքների ապահովման ամուր հանձնառություն: ԱՍՀՆ-ի, այլ շահագրգիռ կառույցների և այն ՀՀ-ների տեսանկյունից, որոնք այժմ հանդիսանում են ԸԲՄԾ տրամադրողներ, այն պետք է ճանաչվի որպես գոհերին պաշտպանելու և աջակցելու առումով մշակութային և կյանքական փոփոխությունների համատեղ հանձնառության օրինակ, և այն դրական օրինակ է հանդիսանում ազգային գործընկերային աշխատանքի՝ Ստամբուլի կոնվենցիայի համատեքստում (9-րդ հոդված):

Կարևոր է նաև ընդունել, որ ծառայությունների այս ցանցի ստեղծումը և ՀՀ կառավարության և ԱՍՀՆ-ի կողմից իրավական կարգավորումների բարելավումը՝ հիմնվելով տեղական/ տարածաշրջանային ՀՀ-ների փորձի և փորձառության վրա, համահունչ են Ստամբուլի կոնվենցիայի 9-րդ հոդվածին՝ ՀՀ-ների և քաղաքացիական հասարակության վերաբերյալ:

Մասնակից պետությունները պետք է գնահատեն, խրախուսեն և խթանեն, բոլոր մակարդակներով, համապատասխան այն հասարակական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատանքը, որոնք ակտիվ են կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի գործում, և արդյունավետ համագործակցություն հաստատեն այդ կազմակերպությունների հետ: (Հոդված 9)

Հայաստանում օրենսդրական փոփոխությունները

Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ոլորտային կառույցները և փորձագետները մի շարք մտահոգություններ արտահայտեցին՝ կապված Օրենքի գործնականում կիրարկման մարտահրավերների և առկա բացերի հետ: Միևնույն ժամանակ, Հայաստանում ընտանեկան բռնության զոհերի աջակցության ծառայությունների ձևավորմանն ու ստեղծմանը զուգահեռ բարձրաձայնվում էր և լոբբիստական աշխատանք էր իրականացվում, որպեսզի կառավարությունն ընդուներ փոփոխություններ, որոնք կուժեղացնեին օրենքը՝ ընտանեկան բռնության զոհերին պաշտպանելու տեսանկյունից: Ոլորտի շահագրգիռ կողմերը և փորձագետները պնդում էին, որ Օրենքի դրույթները ազդեցիկ և համապարփակ չեն, իսկ պաշտպանական միջոցները ունեն խորքային թերություններ (Զիլինգարյան, 2024թ.): Օրենքի վերնագրում «ընտանիքում համերաշխության վերականգնում» եզրույթը հատկապես մտահոգիչ էր, քանի որ ենթադրում էր որոշակի գենդերային կարծրատիպային մոտեցում ընտանեկան հարաբերությունների նկատմամբ:

Ընտանեկան բռնության զոհերին աջակցություն ցուցաբերելու նպատակով Հայաստանի մարզերում ստեղծված ՀՀ-ները հիմնական բարձրաձայնողներն էին Օրենքի և դրա փոփոխման անհրաժեշտության մասին մտահոգություններ հայտնողները: Նրանք ակտիվ էին աշխատանքային խմբում, որը զբաղվում էր առաջարկվող փոփոխությունների մշակման հարցով՝ ներկայացնելով զոհերի և բռնություն վերապրածների տեսակետները և նրանց առջև ծառացած մարտահրավերները: Այս համագործակցային մոտեցումը պետական գերատեսչությունների՝ ՀՀ Ոստիկանության ու ԱՍՀՆ-ի և ՀՀ-ների միջև, համահունչ է Ստամբուլի կոնվենցիայի չափորոշիչներին և կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և զոհերի պաշտպանության ուղղությամբ գործունեություն ծավալող այլ միջազգային կառույցների աշխատանքին (հոդված 18):

Արդյունքում, ՀՀ Ազգային ժողովն ընդունեց մի շարք փոփոխություններ վերոնշյալ Օրենքում և հարակից իրավական ակտերում (ՀՀ քրական, քրեադատավարական, քաղաքացիական օրենսգրքերում և այլ)՝ ուղղված ընտանեկան բռնության մասին օրենսդրության ամրապնդմանը: Օրենքի անվանումից հանվեց «ընտանիքում համերաշխության վերականգնում» եզրույթը և ավելացվեցին ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բռնության լրացուցիչ գործողություններ, որոնք կարող են համարվել ընտանեկան բռնություն, մասնավորապես.

- հարկադիր բժշկական և հոգեբուժական միջամտություններ,
- բժշկական օգնության հասանելիության խոչընդոտում,
- կոտլության ստուգում,
- հարազատների և ընկերների հետ շփումներն արգելելը կամ խոչընդոտելը,
- զուգընկերոջ նկատմամբ վերահսկողության այլ ձևեր:

Բացի այդ, փոփոխությունների արդյունքում քրեականացվեց հետամտումը (stalking) որպես առանձին հանցագործության տեսակ: Թեև ՀՀ քրեական օրենսգրքը ընտանեկան բռնությունը չի դասակարգում որպես առանձին հանցագործություն, այն այժմ հստակեցնում է, որ եթե որոշակի հանցագործություններ կատարողները մերձավոր ազգականներ են, դա կարող է որպես ծանրացուցիչ հանգամանք դիտվել: Չուզընկերները և նախկին

գուզնակները (նրանք, ովքեր ազգականներ կամ ընտանիքի անդամ չեն համարվում) այժմ նույնպես ներառված են այն բռնարարների շարքում, ում կարող է մեղադրանք առաջադրվել այս ծանրացուցիչ հանգամանքի հիման վրա:

Ինչ վերաբերում է երեխաների պաշտպանության ամրապնդմանը ընտանեկան բռնության առնչությամբ, փոփոխությունները սահմանում են, որ ընտանեկան բռնության ականատես երեխան դիտվում է որպես բռնության զոհ, ում նկատմամբ կիրառվում են օրենքով սահմանված պաշտպանության բոլոր միջոցները:

Փոփոխությունները նաև սահմանում են, որ ընտանեկան բռնության զոհերին առաջնահերթություն է տրվում անվճար առողջապահական ծառայություններից օգտվելու համար՝ լուծելու ընտանեկան բռնության հետևանքով առաջացած առողջական խնդիրները, և նախատեսում, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է լինեն հասանելի կացարաններ:

Թեև այս զեկույցի մշակման նպատակով կատարված հետազոտությունը հիմնված է ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների կողմից մինչև նշյալ օրենսդրական փոփոխությունները տրամադրված ծառայությունների ուսումնասիրության վրա, հարկ է նշել, որ այս փոփոխությունները կարող են էական և դրական փոփոխություններ բերել ծառայությունների բարելավման ուղղությամբ՝ զոհերի կարիքների ապահովման նպատակով:

ԸԲՄԾ-ն և պայմանագիրը ԱՍՀՆ-ի հետ

ԸԲՄԾ-ի ձևավորումից և մոբիլիզացումից ի վեր ամբողջ երկրում գործում են 11 աջակցության կենտրոններ, այդ թվում՝ Կանանց աջակցման կենտրոնը Երևանում:

Այս կենտրոնները ֆինանսավորվում են կառավարության կողմից՝ ԱՍՀՆ բյուջեի շրջանակներում, որն իրավասու է պատվիրակել և մշտադիտարկել զոհերին ծառայությունների մատուցումը: ՀՀ օրենսդրական կարգավորումների համաձայն՝ ԱՍՀՆ-ն տարեկան կտրվածքով գնահատում է ԸԲՄԾ-ի համար պահանջվող բյուջեն: Այն ներկայացվում է Կառավարությանը՝ «Ընտանեկան բռնության զոհերին տրամադրվող աջակցության ծառայությունների համար» գործողության ներքո՝ մեկ ծառայության միջին արժեքի հաշվարկով՝ նախատեսված «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն» պետական բյուջեի տարեկան ծրագրով:

ԱՍՀՆ-ն դրամաշնորհային ծրագրեր է նախաձեռնում ամենամյա մրցույթի միջոցով՝ պայմանագրեր կնքելով ծառայություններ մատուցողների հետ Հայաստանի բոլոր մարզերում և Երևանում: Այն բացմրցույթ է, որը հասանելի է պետական գնումների հարթակի միջոցով: Ընտանեկան բռնության մասնագիտական աջակցության ծառայությունները կարող են ֆինանսավորման համար հայտ ներկայացնել: Հաղթող ՀԿ-ների հետ կնքվում է մեկ տարի տևողությամբ պայմանագիր, և նրանց ծառայության դիմաց վճարումները կատարվում են եռամսյակային կարգով: Պայմանագրով նրանցից պահանջվում է ամսական և եռամսյակային կտրվածքով հավաքագրել վիճակագրական տվյալներ և տրամադրել բովանդակային հաշվետվություն: Ծառայությունների համար տրամադրվող միջոցները նախապես ամրագրված թվով ծառայությունների համար են, և գրեթե հավասար են յուրաքանչյուր ծառայության համար, թեև տարբեր մարզերում ընտանեկան բռնության դեպքերի թիվը և բնակչության միջին թիվը տարբեր են:

ԱՍՅՆ պայմանագրով ԸԲՄԾ-ները պարտավորվում են՝

- ծառայություններ մատուցել ընտանեկան բռնության զոհերին,
- զոհերի համար ապահովել ծառայություններից օգտվելու անվտանգ միջավայր,
- հավաքագրել և ներկայացնել ծառայության դիմած բռնության ենթարկված անձանց վերաբերյալ վիճակագրական և ժողովրդագրական տվյալներ՝ օգտագործելով անհրաժեշտ տվյալների շտեմարանը,
- ապահովել օգնության հեռախոսային ծառայություն,
- հավաքագրել և ներկայացնել կատարված աշխատանքի վերաբերյալ և այլ վերաբերելի տվյալներ,
- տրամադրել իրավաբանական աջակցություն, շահերի պաշտպանություն և խորհրդատվություն ընտանեկան բռնության զոհերին,
- ցուցաբերել հոգեբանական աջակցություն ընտանեկան բռնության զոհերին, այդ թվում՝ խորհրդատվություն,
- անհրաժեշտության դեպքում ուղեգրել կացարան,
- տրամադրել աջակցություն վերականգնման, վերաբնակեցման և աշխատանքի տեղավորման հարցում,
- ցուցաբերել աջակցություն ֆինանսական փոխհատուցման համար դիմումների պատրաստման հարցում,
- զոհի համաձայնությամբ տեղեկացնել ոստիկանությանը և դատարանից պահանջել պաշտպանական միջոցներ և արգելքներ,
- համագործակցել այլ գերատեսչությունների, այդ թվում՝ ոստիկանության և սոցիալական ծառայությունների հետ.
- մշտադիտարկման նպատակով եռամսյակը մեկ ամփոփիչ տվյալներ ներկայացնել ԱՍՅՆ-ին:

Պայմանագրի պահանջները կատարելու համար յուրաքանչյուր ծառայություն պետք է կարողանա ապահովել հետևյալը.

- սոցիալական աշխատանքի/ շահերի պաշտպանության ծառայություն, ընտանեկան բռնության զոհերի աջակցության մասնագետի ծառայություն
- թերապևտիկ խորհրդատվական ծառայություն (հոգեբան)
- իրավաբանական ծառայություն (փաստաբան կամ իրավաբան)
- 24-ժամյա հասանելիությամբ օգնության հեռախոսային գիծ;
- ծառայությունների մատուցման ապահով և անվտանգ վայր

Հետևաբար, ԱՍՅՆ-ի կողմից պատվիրակված ծառայությունները պահանջում են որակյալ և փորձառու անձնակազմ՝ ծառայությունների պատշաճ մատուցման համար: Յուրաքանչյուր ԸԲՄԾ կենտրոն պետք է նշանակալի գիտելիքներ ունենա քրեական արդարադատության համակարգի, սոցիալական պաշտպանության, բնակարանային և առողջապահական հարցերի ապահովման ուղղությամբ, ինչպես նաև կապի մեջ լինի այլ ծառայությունների հետ, ինչպիսիք են ոստիկանությունը և սոցիալական ծառայությունները: Իրավաբանը պետք է համապատասխան որակավորում ունենա: Հոգեբանը պետք է ունենա համապատասխան փորձ և ամբողջական պատկերացում տրավմայի և դրա ազդեցության մասին ընտանեկան բռնության համատեքստում: 24-ժամյա օգնության հեռախոսային գծի շահագործումը անձնակազմից զգալի ջանքեր է պահանջում: Բացի այդ, անվտանգ և ապահով վայրի համար կպահանջվեն զգալի ծախսեր՝ ենթադրող անվտանգության միջոցներ:

Հետևաբար, այս պայմանագրի շրջանակներում ԸԲՄԾ-ի առջև նշանակալի պահանջներ են դրվում:

ԸԲՄԾ-ի մշտադիտարկում

Վիճակագրական մշտադիտարկում

ԱՄՅՆ-ն պահանջում է, որ պայմանագրի շրջանակներում կատարվի վիճակագրական մշտադիտարկում, որի տվյալները ստացվում են ամսական և ներկայացվում եռամսյակային կտրվածքով: Սա որոշակի պատկերացում է ստեղծում ծառայությունների պահանջարկի և դրանից օգտվողների ժողովրդագրական տվյալների վերաբերյալ: Այն նաև օգնում է բացահայտել այնպիսի տվյալներ, ինչպիսիք են զոհերի տարիքը, բնության տեսակները, որոնց ենթարկվել են զոհերը, ազդեցությունները առողջության և հոգեկան առողջության վրա, բնարարի անցյալի հետ կապված և այլ անհրաժեշտ ու կարևոր տվյալներ: Այնուամենայնիվ, ԸԲՄԾ-ի հետ քննարկման ընթացքում նշվեց, որ Հայաստանում ընտանեկան բնության զոհերի իրավիճակը հասկանալու համար լրացուցիչ տեղեկություններ հավաքելու անհրաժեշտություն կա: Օրինակ, մշտադիտարկման ձևաթղթում տվյալներ չեն ներկայացվում զոհերի համար արդարադատության համակարգում ունեցած արդյունքների կամ սահմանված պաշտպանության միջոցների և այդ նպատակով կայացված իրավական ակտերի վերաբերյալ: Նման տվյալները կարող են օգնել ընդհանուր պատկերացում կազմել արդարադատության համակարգի արդյունավետության մասին, և արդյոք տարաբնույթ մոտեցումներ են կիրառվում որևէ մարզերում՝ մյուսների համեմատությամբ: Այս տվյալները կարող են ստացվել դատական գործերի վերաբերյալ տվյալների հավաքագրմամբ, բնարարների նկատմամբ քրեական հետապնդման արդյունքների և զոհերի համար նպաստավոր դատական ելքերի վերաբերյալ գրանցմամբ:

Մշտադիտարկման շրջանակներում յուրաքանչյուր ծառայություն պարտավոր է ներկայացնել համառոտ բովանդակային հաշվետվություն: Սա հնարավորություն է տալիս բարձրաձայնել աշխատանքի ընթացքում առաջացած բացերի, մտահոգությունների և մարտահրավերների, ինչպես նաև հաջողությունների մասին: Այնուամենայնիվ, այս ուղղությամբ, ինչպես նաև վիճակագրական տվյալները վերանայելու և առավել արդյունավետ կերպով հավաքագրելու որոշակի անհրաժեշտություն կա:

Ստեղծվել են մի շարք համապարփակ ուղեցույցներ (Scaia and Matosian, 2019թ.), որոնք նպաստել են ԸԲՄԾ-ի կողմից հավաքագրման և գնահատման համար վերաբերելի և անհրաժեշտ տեղեկատվության հստակեցմանը: Այս ուղեցույցները օգտակար ռեսուրս կարող են հանդիսանալ ծառայությունների հետագա բարելավման համար: Ուղեցույցներում ներկայացվում է նաև «ՄԱԿ Կանայք» կազմակերպության կողմից մշակված «Հիմնական ծառայությունների փաթեթը», որը տրամադրում է մի շարք օգտակար գործիքներ ընտանեկան բնության և կանանց նկատմամբ բռնության այլ ծառայությունների գնահատման և մշտադիտարկման համար:

Օգտակար կլինի, օրինակ, դիտարկել յուրաքանչյուր ծառայության կողմից դեպքերի համառոտ նկարագրության ներկայացումը՝ օգտագործելով այնպիսի ձևանմուշ, որը թույլ կտա նրանց լրացնել շահառուների արդյունքները, անվտանգության և վերականգնման ուղղությամբ աշխատանքներն ու խոչընդոտները: ԸԲՄԾ-ի ներկայացուցիչները քննարկման ընթացքում կարծիք հայտնեցին, որ տվյալների հավաքագրման և հաշվետվությունների որակական բաղադրիչի ավելացումը դրական կլինի բոլոր գործընկերների համար:

Գործող մշտադիտարկման համակարգի բարելավման նպատակն է՝

- հնարավորություն ընձեռել ԱՄՅՆ-ին հիմնվել ծառայությունների վերաբերյալ աջակցության կենտրոնների փոփոխվող և ավելի ընդլայնված պատկերացում կազմել վերջիններիս առջև ծառացած բացերի և մարտահրավերների վերաբերյալ,
- հավաքագրել տվյալներ, որոնք կարող են տրամադրվել այլ պետական

մարմիններին՝ ուղղված առողջապահության կամ քրեական արդարադատության ապահովմանը,

- հնարավորություն տալ տվյալների հավաքագրման միջոցով ձևավորել փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակում և իրականացում,
- տրամադրել ԸԲՄԾ-ին իրենց աշխատանքին անդրադարձ կատարելու և սովորելու հնարավորություն.
- բարձրացնել հաշվետվողականությունը յուրաքանչյուր ԸԲՄԾ-ի շրջանակներում.
- զարգացնել ԸԲՄԾ-ի և ԱՍՀՆ-ի միջև հաղորդակցությունը՝ ձևավորված համագործակցության շրջանակներում:

Հաշվի առնելով, որ ԸԲՄԾ ցանցը համեմատաբար վերջերս է ստեղծվել, ԱՍՀՆ-ի կողմից ներկայումս իրականացվող մշտադիտարկումը արդյունավետ է այնքանով, որ ցույց է տալիս տվյալների հավաքագրումից սովորելու և միտումներն ու մարտահրավերները հատկորոշելու հետաքրքրվածություն: Այս ոլորտում շարունակական բարելավումը հնարավորություն կտա ավելի հստակ պատկերացում կազմել ոլորտի մասին, ավելի լավ հասկանալ մարտահրավերները և խոչընդոտները և կընդլայնի ԸԲՄԾ-ի հաշվետվողականությունը:

Չեկույցի պատրաստման պահին նախատեսված է եղել ավարտել տվյալների թվային բազայի ձևավորումը: Այս հարթակը կարող է ԱՍՀՆ-ին հնարավորություն ընձեռել դիտարկելու, թե ինչ լրացուցիչ տվյալներ կարող են հավաքագրվել, մասնավորապես զոհերի և վերապրածների՝ ծառայությունների տրամադրման ընթացքում գրանցած և այլ գործընթացներով պայմանավորված արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև վերանայել այլ ծառայությունների կողմից տրամադրած տվյալները:

Առաջարկություն.

(Առաջարկություններն ավելի մանրամասն ներկայացված են 5-րդ բաժնում)

- 1. Ընդլայնել վիճակագրական տվյալների մշտադիտարկումը՝ ավելի լավ հասկանալու մարտահրավերները ինչպես ԸԲՄԾ-ի, այնպես էլ այլ ծառայությունների և ընտանեկան բռնության զոհերի համար:**

Մշտադիտարկման չափորոշիչները

ԸԲՄԾ-ի ներկայացուցիչների հետքննարկման ընթացքում աջակցության ծառայությունների մշտադիտարկման չափորոշիչների կարգավորումը և նրանց աշխատանքի սկզբունքներն ու էթիկայի կանոնակարգումը բարձրաձայնվել է որպես վերջիններիս համար ցանկալի ձգտում: Նշվեց, որ դառնալիս կօգնի կատարելագործել իրենց գիտելիքներն ու աշխատանքը, այլև կբարելավի այլ ծառայությունների հետ համագործակցությունը: Քննարկվել է նաև, որ որակավորումը և/կամ որևէ հավատարմագրման ապահովումը կնպաստի նոր կադրերի հավաքմանը և հեռանկարում աշխատանքն ավելի գրավիչ կդարձնի: Ծառայությունների տրամադրման գործում անհրաժեշտ հմտությունների ճանաչումը, ինչպես նաև ընտանեկան բռնության ծառայությունների տրամադրմանը համապատասխան հմուտ մասնագետների ներգրավումը, կապահովեն անվտանգությունն ու կզարգացնեն կարողությունները:

Չեկույցի պատրաստման պահին որոշակի աշխատանք էր տարվում ԸԲՄԾ-ի կողմից իրականացվող ծրագրերի մշտադիտարկման այցերի կատարման ուղղությամբ, սակայն համապատասխան գործընթացի սահմանումը թույլ կտա որակի ավելի կայուն մշտադիտարկում իրականացնել: Այս նախաձեռնությունը, հավատարմագրման գործընթացի հետ մեկտեղ, կապահովի ԱՍՀՆ-ի վստահությունը ԸԲՄԾ-ի չափորոշիչների վերաբերյալ և կկատարելագործի հենց կենտրոնների կարողությունները: Այն նաև ցույց կտա այլ ծառայություններին, ինչպիսիք են ոստիկանությունը և սոցիալական

ծառայությունները, որ կենտրոնները քաջատեղյաակ են այնպիսի խնդրահարույց ոլորտային ուղղություններից, ինչպիսիք են տվյալների ներկայացումը և երեխաների պաշտպանությունը:

Առաջարկություն

2. Մշակել որակական մշտադիտարկման մեխանիզմ՝ ներառյալով դեպքերի ուսումնասիրությունը և ապացուցահեն տվյալների հավաքագրումը զոհերի համար կարևոր արդյունքների մասով: Դրանք կարող են օգտակար լինել զոհի անցած ճանապարհի և վերականգնման ընթացքում խոչընդոտների վերաբերյալ ավելի խորը պատկերացում կազմելու համար:

Բաժին 2. Գործելակերպերի սկզբունքներն ու չափորոշիչները ԸԲՄԾ-ում

Ընտանեկան բռնության զոհերի համար մասնագիտացված աջակցության ծառայությունների չափորոշիչների գնահատում և մշտադիտարկում

Ստամբուլի կոնվենցիայի 22-րդ հոդվածը ներկայացնում է կանանց նկատմամբ բռնության զոհերի աջակցության մասնագիտացված ծառայության սահմանումը: Կոնվենցիայի Բացատրական գեկույցում այն ընդլայնվում է, նշելով, որ նման մասնագիտացված աջակցությունը պետք է «ապահովի զոհերի՝ իրենց առանձնահատուկ կարիքներին համապատասխանող օպտիմալ աջակցության և օգնության միջոցով հզորացնելու պահանջը»: Նման ծառայությունները պետք է ունենան «գենդերային բռնության մասին խորը գիտելիք» ունեցող անձնակազմ: Չեկույցում նշվում է, որ նման ծառայությունները սովորաբար առավել պատշաճ ձևով մատուցվում են կանանց 34-ների կողմից (հոդված 132): Բացատրական գեկույցը նաև Կոնվենցիայի 23-րդ հոդվածի վերաբերյալ փաստարկներ է ներկայացնում որ, զոհերը «բախվում են բազմաթիվ, փոխկապակցված խնդիրների՝ կապված իրենց առողջության, անվտանգության, ֆինանսական վիճակի և իրենց երեխաների բարեկեցության հետ» (հոդված 133): Մասնագիտացված ծառայություններն օգտագործում են ոլորտային գիտելիքները՝ հատկապես կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության զոհերին ուղղակի աջակցություն ցուցաբերելու համար: Դրանք ներառում են համայնքային աջակցության ծառայություններ և կացարաններ, որոնք գոյություն ունեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության զոհերի և վերապրածների հզորացման, աջակցման և շահերի պաշտպանության համար, և ունեն սկզբունքներ, հմտություններ և գիտելիքներ՝ դա իրականացնելու համար:

Ընտանեկան բռնության զոհերի աջակցության մասնագետների ծառայությունների գնահատման և մշտադիտարկման ժամանակ այս ուղին կիրառելու օգտակար միջոց է Եվրոպայի խորհրդի «կանանց նկատմամբ բռնության զոհերի աջակցության ծառայությունների նվազագույն չափորոշիչների» օգտագործումը (2008թ.): Այս չափորոշիչները ներառված են Ստամբուլի կոնվենցիայի հիմնարար սկզբունքներում, և ձևակերպված են հատուկ հղում կատարելով մասնագիտացված աջակցության ծառայություններին:

Ստամբուլի կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության զոհերի աջակցության ծառայությունների նվազագույն չափորոշիչներից բխող մասնագիտացված ծառայությունների հիմնական սկզբունքները:

1. Ծառայությունները պետք է գործեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության գենդերային ընկալմամբ:

Մարդու իրավունքների տեսանկյունից սա նշանակում է ընդունել կանանց խոցելիության ու դժվար իրավիճակներում հայտնվելու առավել մեծ հավանականությունը: Դա նաև նշանակում է գիտակցել, որ մասնագիտացված ծառայություններից օգտվողների ապահովության զգացման համար անհրաժեշտ է, որպեսզի ծառայությունները տրամադրվեն կանանց կողմից և անվտանգ տարածքները նախատեսված լինեն միայն կանանց համար:

2. Անվտանգություն, ապահովություն և մարդկային արժանապատվություն

Դրանք պետք է ապահովվեն ծառայությունների բոլոր գործելակերպերի և միջամտությունների շրջանակներում: Պետք է լավ պատկերացում ապահովվի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության զոհերի առկա ռիսկի մակարդակի մասին, և դրանց համապատասխան աջակցություն տրամադրվի:

3. Մասնագիտացված ծառայություններ

Անձնակազմի գիտելիքների և հմտությունների պաշարը պետք է համապատասխանի ծառայությունից օգտվողների հատուկ կարիքներին, որոնք հաճախ բարդ են: Սա ներառում է զոհերի վրա բռնության և հարկադրանքի տրավմատիկ ազդեցությունների վերաբերյալ իրազեկում և «տրավմատեղեկացված» աշխատանքային գործելակերպերի ստեղծում՝ վերապատրաստման հիման վրա՝ համապատասխան կերպով արձագանքելու զոհերի հնարավոր վախերին և անվտանգության դեպքերին, ինչպես նաև միայն կանանց համար նախատեսված տարածքների ապահովման անհրաժեշտության գիտակցում:

4. Բազմազանություն և հասանելիություն

Ծառայությունները պետք է մշակվեն և հարմարեցվեն բոլոր կարիքն ունեցող կանանց և երեխաներին: Դրանք պետք է հասանելի լինեն անվճար՝ հավասարապես և պատշաճ կերպով բաշխված ըստ երկրի աշխարհագրության և ժողովրդագրության: Ճգնաժամային ծառայությունները պետք է հասանելի լինեն 24 ժամ:

5. Շահերի պաշտպանություն և աջակցություն

Աշխատանքային պրակտիկան պետք է ներառի շահերի պաշտպանություն և աջակցություն, որպեսզի ապահովվեն ծառայություններից օգտվողների իրավունքներն ու կարիքները: Այն կարող է ներառել անհրաժեշտության դեպքում աջակցություն դատական գործերի ընթացքում, նյութական կամ փոխհատուցման իրավունքները վերականգնելու հետ կապված, ինչպես նաև հուզական/հոգեբանական աջակցություն:

6. Հզորացում

Աջակցության ծառայությունները պետք է իրազեկեն ծառայություններից օգտվողներին իրենց իրավունքների մասին՝ հնարավորություն տալով նրանց կատարել տեղեկացված ընտրություն: Նրանց պետք է վերաբերվել արժանապատվությամբ, հարգանքով և զգայունությամբ:

7. Մասնակցություն և խորհրդատվություն

Աջակցության ծառայություն մատուցողների կողմից զարգացման և ծառայությունների մատուցման ժամանակ պետք է կարևորվեն դրանցից օգտվողների տեսակետներն ու փորձառությունները՝ հնարավորության դեպքում օգտագործելով գնահատումը և վերջիններիս հետ խորհրդակցությունները: Ծառայությունները պետք է ձգտեն ապահովելու, որ զոհերի և վերապրածների ձայնը լսելի լինի:

8. Խորհրդապահություն

Աջակցության ծառայությունից օգտվողի խորհրդապահության իրավունքը պետք է առաջնահերթ լինի: Ցանկացած իրավիճակում, երբ խորհրդապահությունը պետք է որևէ կերպ սահմանափակվի (օրինակ, եթե երեխան վտանգի տակ է), ապա ծառայությունից

օգտվողները պետք է տեղեկացված լինեն այդ սահմանափակումների մասին:

9. Համակարգված, միջգերատեսչական արձագանք

Աջակցության ծառայությունները պետք է գործեն մի շարք համապատասխան այլ ծառայությունների հետ զուգորդված՝ համագործակցելով, որպեսզի կարողանան ապահովել ծառայություններից օգտվողների անվտանգությունն ու կարիքները: Սա պահանջում է բոլոր գերատեսչությունների կողմից գենդերազգայուն մոտեցման իմացություն և ծառայություններից օգտվողների ռիսկերի և կարիքների գիտակցում:

10. Բռնարարների պատասխանատվության ենթարկում

Աջակցության ծառայությունները պետք է աշխատեն զոհերի նկատմամբ վստահության և հարգանքի սկզբունքների համաձայն, ինչպես նաև այն համոզմունքով, որ կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն գործադրողները պետք է պատասխանատվություն կրեն իրենց արարքների համար: Սա պետք է ներառված լինի տղամարդ բռնարարների համար նախատեսված ցանկացած ծրագրերի մեջ: Վերջիններս պետք է մշտապես համագործակցեն զոհերի համար նախատեսված մասնագիտացված ծառայությունների հետ: Այն իրավիճակներում, երբ աջակցության ծառայությունը աշխատում է ինչպես զոհերի, այնպես էլ բռնարարների հետ, ծառայությունները պետք է գործարկվեն առանձին, և այս տարբեր աշխատանքների միջև չպետք է լինի որևէ համընկնում:

11. Կառավարում և հաշվետվողականություն

Մասնագիտացված ծառայություններ տրամադրող կազմակերպությունները պետք է պատշաճ կերպով կառավարվեն՝ օգտագործելով անձնակազմի հաշվետվողականության ամուր համակարգեր: Անձնակազմին պետք է տրվի համապատասխան աջակցություն, ինչպես նաև անցկացվի համապատասխան հմտություններ և որակավորում ստանալու համար վերապատրաստում:

12. Հանդուրժողականության դեմ պայքար

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության նկատմամբ հանդուրժողականության դեմ պետք է տարվի պայքար աջակցության ծառայություն տրամադրող կազմակերպությունների կողմից և նրանց գործելակերպի շրջանակներում: Պետք է խթանվեն «առանց բռնության» մոդելները՝ օգտագործելով գենդերային վերլուծություն՝ բարձրացնելու իրազեկվածությունը իրենց գործունեության համայնքներում, ինչպես նաև անհատների շրջանում:

ԸԲՄԾ-ն Հայաստանում

ԸԲՄԾ-ի հետ քննարկման ընթացքում նրանց առաջադրվեց նշել, թե որոնք են իրենց կարծիքով իրենց աշխատանքի ամենահաջողված կողմերը և որոնք են իրենց աշխատանքի առաջնահերթությունները: Նշված հիմնական սկզբունքները հետևյալն են.

■ Վստահություն

Ներկայացուցիչները ընդգծեցին արձագանքի տրամադրման կարևորությունը, որը թույլ կտա ընտանեկան բռնության զոհերին վստահել իրենց: Սա շատ կարևոր է լավ գործելակերպերի տեսանկյունից. դրանք հատուկ կենտրոնանում են զոհերի կարիքների վրա, և համարվում են անկախ պետական մարմիններից՝ Ստամբուլի

կոնվենցիայի 8-րդ հոդվածին համապատասխան:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ընտանեկան բռնության զոհերը հաճախ խուսափում են օգնություն հայցելուց այնպիսի պետական կառույցների նկատմամբ վստահության բացակայության պատճառով, ինչպիսիք են ոստիկանությունը կամ սոցիալական ծառայությունները: Մասնագիտացված ծառայությունների նկատմամբ վստահությունը, որը ընկալվում է որպես համապատասխան հմտություններ ունեցող կառույց, նաև օգնում է բռնության զոհերին որոշումներ կայացնել իրենց իրավիճակի վերաբերյալ և առաջ շարժվել դեպի անվտանգություն և վերականգնում:

■ Անվտանգություն և խորհրդապահություն

Աջակցության ծառայությունների ներկայացուցիչները համոզված էին, որ հասկանում են ընտանեկան բռնությամբ ապրող կանանց և երեխաների ռիսկերի և իրավիճակի բարդությունը: Անվտանգությունը դիտվում էր որպես առաջնահերթություն իրենց աշխատանքում, և նրանք նաև գիտակցում էին իրենց աշխատանքում սեփական անվտանգությունը պաշտպանելու անհրաժեշտությունը: Նրանք նաև կարծում էին, որ խորհրդապահությունը աշխատանքի հիմնական սկզբունքն է և շատ ամուր կապված է վստահության հետ:

■ Կյանքի վերակառուցում. համալիր և մասնագիտացված ծառայություն

Աջակցության ծառայության կենտրոնների ներկայացուցիչները գտնում են, որ իրենք ոչ միայն կյանքեր փրկելու ներուժ ունեն, այլ նաև կյանքեր վերակառուցելուն աջակցելու: Դա իրականացվում է շահերի պաշտպանության և մասնագիտացված աջակցության, ինչպես նաև հոգեբանական աջակցության/ խորհրդատվության միջոցով: Ծառայությունները կենտրոնանում են յուրաքանչյուր զոհի կարիքների բարդության շուրջ՝ հիմնվելով ընտանեկան բռնության, այդ թվում՝ տրավմայի բազմաթիվ ազդեցությունների ըմբռնման վրա: Որպես այդպիսին, նրանք աշխատում են որպես մասնագետներ, ովքեր պատրաստ են մատուցել ամբողջական, համապարփակ ծառայություն, որը հաշվի է առնում երկարաժամկետ վերականգնմանը նպաստող միջամտությունների կարևորությունը, ինչպես նաև անվտանգությանն ուղղված միջամտությունները:

■ Նվիրվածություն

ԸԲՄԾ-ի համար մեկ այլ առանցքային թեմա էր նրանց նվիրվածությունն իրենց աշխատանքին և ծառայությունից օգտվողներին: Նրանք պատրաստ են արձագանքել աշխատանքային ժամերից դուրս, ինչը հաճախ այն ժամանակն է, երբ զոհերը կարող են շտապ արձագանքման կարիք ունենալ: Որպես ծառայությունների և ԱՍՀՆ-ի միջև կնքված պայմանագրի մաս, աջակցության ծառայություններից պահանջվում է տրամադրել 24-ժամյա հասանելի օգնության հեռախոսային գիծ: Այս պարտավորությունը առանցքային է այն առումով, թե ինչու են մասնագիտացված ծառայությունները լավագույն մոդելը զոհերի կարիքներն ապահովելու համար: Այն ապահովում է հասանելիություն ճգնաժամի ժամանակ և նշանակում է, որ ծառայություններն իրենց աշխատանքին մոտենում են «զոհակենտրոն» տեսանկյունից:

■ Հզորացում

Ընտանեկան բռնության աջակցության ծառայությունները միասնաբար ընդգծեցին իրենց ծառայությունների մատուցման գործում հզորացման հայեցակարգը և պրակտիկան: Նրանք հարգում են այն ընտրությունները, որոնք զոհերը կատարում

են՝ հիմնվելով ծառայության տրամադրած աջակցության և տեղեկատվության վրա: Նրանք նաև իրենց աշխատանքը համարում են գեներային հավասարությանը և կանանց և աղքիկների տնտեսական և մշակութային հզորացմանն ուղղված ավելի լայն հանձնառությունների մաս:

■ Համայնքային զարգացում

Ընտանեկան բռնության աջակցության բոլոր ծառայությունները ընդունել են համայնքի զարգացման գործում իրենց դերի կարևորությունը և աշխատել՝ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության հանդեպ վերաբերմունքը փոխելու ուղղությամբ: Որպես իրենց պայմանագրային աշխատանքի մի մաս՝ նրանք իրականացնում են իրազեկվածության բարձրացման նախաձեռնություններ տեղական մակարդակով, ինչպես նաև տրամադրում են վերապատրաստումներ: Որպես այդպիսին, նրանք ոչ միայն մատուցում են ծառայություն, այլև որտեղ հնարավոր է, ներգրավվում են տեղական և տարածաշրջանային մակարդակներում՝ փոխելու վերաբերմունքը՝ որպես ընտանեկան բռնության կանխարգելման և զոհերի նկատմամբ համայնքի արձագանքի բարելավումը խրախուսելու մաս:

Այս հիմնական սկզբունքները համընկնում են Ստամբուլի կոնվենցիայի առանցքային սկզբունքների և աջակցող ծառայությունների այլ միջազգային ստանդարտների հետ, և այս քննարկման արդյունքներից ակնհայտ է, որ մասնագիտացված աջակցության ծառայությունները քաջ ծանոթ են իրենց աշխատանքում պահանջվող մոտեցումներին: Բացի այդ, ԸԲՄԾ-ն կանոնավոր կերպով մասնակցում են համատեղ վերապատրաստումների՝ օգտագործելով ընտանեկան բռնության աջակցության ավելի փորձառու և երկարատև գործարկված ծառայությունների արդյունքում ձեռք բերված գիտելիքներն ու փորձը: Դասընթացը հիմնված է նաև «Սոցիալական աշխատողների պրակտիկայի ուղեցույցներ. Ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկման բարձրացում» ռեսուրսի վրա (Մաթոսյան և այլք, 2019թ.): Այս ռեսուրսը հիմնված է Ստամբուլի կոնվենցիայի սկզբունքների վրա և ապահովում է մի շարք համապարփակ ուսուցման գործիքներ պրակտիկ մասնագետների վերապատրաստման համար: Եթե այն օգտագործվի բոլոր նոր աշխատակիցների համար, կարող է հավաստիացնել, որ անձնակազմն ունի իր մասնագիտական աշխատանքին համապատասխանող գիտելիքներ և վերապատրաստում:

ԸԲՄԾ կենտրոնները նաև կանոնավոր կերպով համախմբվում են՝ բարձրաձայնելու և շտկելու գիտելիքների բացերը, իրենց աշխատանքում առկա մարտահրավերները և մշակելու լրացուցիչ վերապատրաստման ռեսուրսներ: Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան նույնպես հարթակ է, որով գիտելիքները տարածվում և կատարելագործվում են:

Այս համագործակցային ուսուցման գործընթացի արդյունքում ԸԲՄԾ-ի կողմից կիրառվող դեպքերի վարման փաստաթղթերը ընդհանուր առմամբ նմանատիպ են և ցույց են տալիս, որ նրանք ունեն ուղղորդման, դեպքերի վարման և ռիսկերի ու կարիքների գնահատման նույնանման պրակտիկա: Սա պետք է ապահովի արձագանքների և դեպքերի վարման հետևողականություն մարզերում:

Հաշվի առնելով այս մեխանիզմները, ԸԲՄԾ-ում անշուշտ, արդեն առկա է բարձրորակ մասնագիտացված ծառայությունների ներուժը: Որոշ կենտրոններ այս ոլորտում ավելի քիչ փորձ ունեն, քան մյուսները, սակայն ակնհայտ է, որ կենտրոնները ձգտում են ձեռք բերել գիտելիքներ և զարգացնել Ստամբուլի կոնվենցիայի սկզբունքներին համապատասխանող աշխատանքային պրակտիկա: Գործող մեխանիզմները, սակայն, ունեն շարունակական բարելավման անհրաժեշտություն:

Հաշվի առնելով, որ ընտանեկան բռնության աջակցության յուրաքանչյուր տարածքային ծառայություն աշխատում է համաձայն ԱՄՅՆ-ի պայմանագրի նույն պահանջների, և որ

Նրանցից պահանջվում է ներկայացնել հետևողական մշտադիտարկման ձևաչափ, կարելի է պնդել, որ ծառայությունները միմյանց համահունչ են մարզերում: Ավելին, հաշվի առնելով համատեղ ուսուցումը և չափանիշները և համատեղ աշխատանքը Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հարթակի միջոցով, կարելի է նաև պնդել, որ որակի այս հետևողականությունը կարող է պահպանվել և զարգացվել, որպեսզի ծառայությունները շարունակեն բարելավվել:

Այնուամենայնիվ, կարևոր է, որ ԱՍՀՆ-ն կարողանա գործնականում ապահովել որակի չափանիշների հավաստիացումը՝ վստահ լինելով, որ մատուցվող ծառայությունները համահունչ են Ստամբուլի կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության զոհերի աջակցության ծառայությունների նվազագույն չափորոշիչների» սկզբունքներին: Չնայած մշտադիտարկումը որոշակի չափով ապահովում է դա, չափորոշիչների վերանայումը գործնականում հնարավորություն կտա մեծացնել վստահությունը ծառայությունների որակի նկատմամբ, թույլ կտա ԸԲՄԾ-ին վերանայել իրենց աշխատանքը և կատարելագործվել, ինչպես նաև կբարձրացնի ԸԲՄԾ-ի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ԱՍՀՆ-ին:

Առաջարկություններ

3. Ներդնել ԸԲՄԾ-ի հավատարմագրման համակարգ, որը ԱՍՀՆ-ին կտրամադրի որակի չափանիշների երաշխիք, ինչպես նաև ԸԲՄԾ-ում ավելի ռազմավարական կարողություններ և գիտելիքներ կստեղծի: Իդեալական տարբերակում այն պետք է համակարգվի անկախ կազմակերպության կողմից:

4. Աջակցել ԸԲՄԾ-ին անձնակազմի և կամավորների համար սեփական մասնագիտական վերապատրաստման մշակման գործում և ուսումնասիրել պաշտոնական որակավորումների հնարավորությունը: Դրան կարելի է հասնել համալսարանների և ուսումնական այլ հաստատությունների ներգրավմամբ:

Բաժին 3. ԸԲՄԾ-ի՝ իրենց տարածաշրջաններում ծառայություններ մատուցելու կարողությունները

Թեև ԱՄՅՆ-ի կողմից կնքված պայմանագրերը համահունչ են տարբեր մարզերում ֆինանսավորման և մշտադիտարկման առումով, կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր տարածաշրջանի ժողովրդագրական տարբերությունները: Քննարկման ընթացքում ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների ներկայացուցիչները բարձրացրել են այս հարցը և թե ինչպես որոշ տարածաշրջաններում մշակութային վերաբերմունքը կարող է ավելի խնդրահարույց լինել, քան մյուսներում: Սա պետք է հաշվի առնել ծառայությունների մատուցման կարողությունները գնահատելիս: Այնտեղ, որտեղ մշակութային վերաբերմունքն ավելի խնդրահարույց է, ազդեցություն կնկատվի գոհերին աջակցելու առաջընթացի վրա: Այն նաև ազդում է իրազեկվածության բարձրացման անհրաժեշտության վրա: Թեև իրազեկվածության բարձրացումը ԱՄՅՆ-ի պայմանագրի հիմնական պահանջն է, ռեսուրսները կարող են սահմանափակել իրականացման հնարավոր ծավալը, իսկ շարունակական ազգային և տարածաշրջանային իրազեկման արշավները նույնքան կարևոր են և օգնում են աջակցել ՀԿ-ներին իրենց աշխատանքում:

2024թ-ից Հայաստանի վիճակագրական կոմիտեն իրապարակում է տեղեկատվություն ամբողջ երկրում բռնության դեպքերի վերաբերյալ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ բռնության դեպքերի գրանցումը ոչ միշտ է արտացոլում ընդհանուր բնակչության թվաքանակը և կարող է տարբերվել տարածաշրջանից տարածաշրջան՝ կախված բազմաթիվ գործոններից, ինչպիսիք են ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների կարողությունները, սոցիալական և մշակութային գենդերային նորմերի նշանակալիությունը, ոստիկանության արձագանքը, աղքատությունը և այլն: Այնուամենայնիվ, աղքատության մակարդակի և ամենաաղքատ շրջաններում ընտանեկան բռնության դեպքերի աճի հարաբերակցությունը ընդգծում է ընտանեկան բռնության գոհերի համար համալիր միջամտության և աջակցության անհրաժեշտությունը:

2024թ-ի առաջին քառորդում գրանցված ընտանեկան բռնության դեպքերի թիվը

Մարզ	Գրանցված ընտանեկան բռնության դեպքերի թիվը
Երևան	114
Արագածոտն	26
Արարատ	17
Արմավիր	28
Գեղարքունիք	27
Լոռի	45
Կոտայք	28
Շիրակ	51
Սյունիք	30
Վայոց Ձոր	17
Տավուշ	26
Ընդամենը	409

Աղքատությունը կարող է լինել ընտանեկան բռնության գոհերի հետ արդյունավետ աշխատանքի հավանականության ցուցանիշ: Ֆինանսական ռեսուրսների բացակայությունը կարող է նշանակել, որ ընտանեկան բռնություն գործադրողին լքելու տարբերակները շատ ավելի սահմանափակ են, հատկապես, երբ կան երեխաներ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս տարբեր մարզերում աղքատության մակարդակները:

Հայաստանի աղքատության ցուցանիշները (ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակումները)

	2021թ.		2022թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Աղքատ (տոկոսային ցուցանիշ)	Ընդհանուր բնակչություն (տոկոսային ցուցանիշ)
Երևան	0.2	15.9	0.7	18.5	22.5	30.3
Արագածոտն	0.0	13.5	0.0	7.9	1.3	4.1
Արարատ	1.0	28.0	0.2	23.8	8.7	9.0
Արմավիր	4.0	37.9	1.6	40.8	15.6	9.5
Գեղարքունիք	4.7	49.2	2.5	33.9	10.1	7.4
Լոռի	0.2	21.8	0.7	18.6	7.3	9.7
Կոտայք	2.0	23.6	0.0	26.1	11.0	10.5
Շիրակ	3.1	46.9	3.6	41.6	13.8	8.3
Սյունիք	0.0	2.8	0.6	5.4	0.9	4.3
Վայոց Ձոր	0.0	26.6	0.0	15.7	1.2	1.9
Տավուշ	1.3	38.2	5.0	37.4	7.6	5.0
Ընդամենը	<u>1.5</u>	<u>26.5</u>	<u>1.2</u>	<u>24.8</u>	<u>100</u>	<u>100</u>

Պահանջվող ծառայությունների տրամադրման կարողությունները գնահատելիս կարևոր է նաև հաշվի առնել ՀՀ-ների ֆինանսական կարողությունները: Որոշները ավելի փոքր են, քան մյուսները (ինչը որակի անհրաժեշտ ցուցիչ չէ. փոքր կազմակերպությունները հաճախ շատ տեղայնացված են, գոհակենտրոն և լավ գիտելիքներ ունեն տեղական համայնքների մասին): Ակնհայտ է, սակայն, որ որոշ ՀՀ-ներ ունեն ավելի քիչ ֆինանսական հնարավորություններ, քան մյուսները, ինչը, ամենայն հավանականությամբ, կազմի ծառայությունների մատուցման, անհրաժեշտ աշխատակիցների համալրման և գոհերի հետ իրենց աշխատանքի համար համապատասխան անվտանգ վայր ապահովելու ներուժի վրա:

ԱՄՆ-ի հետ ծառայությունների պայմանագրի պահանջները նշանակալի են կարողությունների առումով: ԸԲՄԾ-ի ներկայացուցիչների հետ քննարկումները ցույց տվեցին, որ նրանց ռեսուրսները շատ «ճկուն» են կարիքների բազմազանության պատճառով: Որոշներն իրենց աշխատակիցների ուժերի «հյուծվելու» մտավախություն հայտնեցին: Նաև անդրադարձ կատարվեց իրենց օգնության հեռախոսային գծերը օրը 24 ժամ գործարկելու պահանջին: Բացի այդ, ընտանեկան բռնության գոհերի հետ աշխատանքը պահանջում է զգալի փորձ և փորձառություն՝ համապատասխան որակավորում ունեցող հոգեբան, համապատասխան գիտելիքակազմով իրավաբան և ընտանեկան բռնության հարցերով մասնագետ:

Այցելություն «Հանուն հավասարության» ՀԿ

Հայաստանի Տավուշի մարզում «Հանուն հավասարության» ԸԲԲԾ կենտրոնն կատարած այցը և թիմի հետ քննարկումը ձևավորեցին այսպիսի պատկեր: Տավուշի մարզը հյուսիսից սահմանակից է Վրաստանին, արևելքից՝ Ադրբեջանին: Տարածաշրջանի համայնքներից շատերը փոքր են և մեկուսացված, գյուղատնտեսական տնտեսությամբ, և ըստ Հայաստանի Վիճակագրական կոմիտեի՝ աղքատության համեմատաբար բարձր մակարդակ ունեն: Մարզը վերջին տարիներին բախվել է բազմաթիվ մարտահրավերների, այդ թվում՝ պատերազմական գոտու տարածքներին մոտ գտնվելու պատճառով: Աղքատությունը, գյուղական մեկուսացումը և կոնֆլիկտային իրավիճակները բոլորն էլ սրող գործոններ են, երբ խոսքը ընտանեկան բռնության մասին է: Գյուղական համայնքները հաճախ փոքր են, և տեղաշարժվելը կարող է դժվարություններ կայացնել ընտանեկան բռնության զոհերի համար, ովքեր աջակցություն են հայցում: Կոնֆլիկտային միջավայրում, ամենայն հավանականությամբ, կնկատվի նաև ընտանեկան բռնության աճ (Head et al, 2024թ.): Հետևաբար, այս ոլորտում ընտանեկան բռնության մասնագիտացված ծառայությունն իր աշխատանքում առանձնահատուկ լրացուցիչ մարտահրավերներ ունի:

«Հանուն հավասարության» ՀԿ-ն ցույց տվեց նվիրվածություն ու գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են ընտանեկան բռնության աջակցության ծառայություն մատուցելու համար: Նրանց մոտեցումը հիմնականում համահունչ է Ստամբուլի կոնվենցիայի հիմնական սկզբունքներին: Նրանք նախանշեցին զոհերի անվտանգության առաջնահերթությունը և զոհի ընտրության նկատմամբ հարգանքը: Նրանք ժամանակին արձագանքում են կարիքներին և ճկուն են կարիքներին կատմամբ: Ծառայությունը ցուցադրեց մասնագետների գիտելիքներն ու հզորացման սկզբունքները և ռիսկի և խորհրդապահության խորը ըմբռնում:

Այս ԸԲԲԾ-ի առջև ծառացած որոշ մարտահրավերներ, այնուամենայնիվ, հատուկ են տարածաշրջանին, որտեղ նրանք գործում են, և դրա շրջանակներում իրենց սեփական կարողություններին: Ծառայության մատուցման ողջ ընթացքի ապահովման համար ծառայության ֆինանսավորումը բավարարչէ, և այդ պատճառով նրանք պետք է ռեսուրսներ և ժամանակ օգտագործեն ֆինանսավորման այլ աղբյուրներ հայթայթելու համար: Ծենքը, որտեղ գտնվում է ծառայությունը, չունի Ստամբուլի կոնվենցիայով սահմանված պահանջները բավարարող որոշ տարրեր՝ ծառայությունն առավել նպատակահարմար ձևով իրականացնելու համար: Նրանց կարծիքն այն էր, որ իրենց ծառայությունների մատուցման համար նախատեսված հարմարությունների բարելավումը զգալի փոփոխություն կբերի ծառայության որակին: Հարցին, թե որն է այն լուծումը, որը կբարելավի իրենց աշխատանքը, նրանք պատասխանեցին, որ առաջնահերթություն է բարեկարգված տարածքի ապահովումը: ԱՄՆ պայմանագիրը պահանջում է ունենալ ապահով և անվտանգ վայր: Ոստիկանության ներկայացուցչի հետ քննարկումը նաև մտահոգություն է առաջացրել համապատասխան անվտանգության միջոցների ապահովման վերաբերյալ, և դա կարող է լինել ֆինանսական մարտահրավեր, որին բախվում են որոշ ԸԲԲԾ կենտրոններ:

Այս կոնկրետ դեպքը հանդիսանում է արտաքին գործոնների օրինակ, որոնք ազդում են միայն մեկ ԸԲԲԾ-ի կարողության վրա՝ հնարավորինս լավագույն ծառայություն մատուցելու համար: Թեև հիմնական վերապատրաստման ընթացքում գիտելիքները և ծառայությունների մատուցման որակը կարող են համահունչ լինել ԸԲԲԾ ամբողջ ցանցում, կան նաև այլ գործոններ, որոնք ազդում են ընտանեկան բռնության զոհերի կարիքները բավարարելու կարողության վրա: Նման գործոնները կարևոր են տարածաշրջանային ծառայությունների կարողությունները հաշվի առնելիս, որոնց համար մարտահրավեր են հանդիսանում իրենց տարածաշրջանների ժողովրդագրական, աշխարհագրական և մշակութային առանձնահատկությունները: Այս առանձնահատուկ մարտահրավերները հավասարապես կարևոր են յուրաքանչյուր տարածաշրջանում ծառայություններ մատուցելու կարողությունները գնահատելիս: Թեև «Հանուն հավասարության» ՀԿ-ն

ակնհայտորեն ունի ծառայություն մատուցելու ներուժ և գիտելիք, կան ծառայության որակի արտաքին մարտահրավերներ, որոնք ազդում են ծառայության մատուցման որակի վրա:

ԸԲՄԾ-ի տարբեր կենտրոններ գործում են տարբերվող բնակչություն ունեցող տարբեր տարածաշրջաններում, ուստի ժողովրդագրական, սոցիալական և մշակութային մարտահրավերների տարբերությունները նշանակում են, որ որոշ դեպքերում ավելի մեծ ծանրաբեռնվածություն կարող է լինել և կպահանջվեն ավելի շատ ռեսուրսներ: Մարտահրավերների այս տարբերություններն ավելի լավ հասկանալու համար խորքային մշտադիտարկման շարունակական զարգացումը կօգնի հատկորոշել ավելի մեծ մարտահրավեր ներկայացնող ոլորտները և կարողությունները մեծացնելու անհրաժեշտությունը՝ ի հայտ գալու դեպքում:

Միևնույն ժամանակ, ԱՍՀՆ-ն կարող է դիտարկել պայմանագրի երկարացում՝ մեկ տարուց մինչև 3-5 տարի ժամկետով: Այսպիսով կապահովվի ԸԲՄԾ կենտրոնի ֆինանսական կարողությունը, կնվազի ամեն տարի նոր պայմանագրի համար շարունակաբար հայտ ներկայացնելու անհրաժեշտությունը և այլ միջոցներով ֆինանսական կարողությունների ամրապնդման կարիքը: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ երկարացումը պետք է իրականացվի ավելի խորքային մշտադիտարկման և որակի չափորոշիչների ներդրման հետ մեկտեղ, որպեսզի ԱՍՀՆ-ն ունենա ծառայությունների պատշաճ և որակյալ մատուցման երաշխիք:

Առաջարկություններ

4. Դիտարկել ՀԿ-ների համար պայմանագիրը մեկ տարուց ավել երկարացումը՝ հնարավորություն տալով նրանց նախօրոք բյուջե կազմել և ունենալ ավելի շատ ֆինանսական երաշխիքներ իրենց աշխատանքի համար:

5. Դիտարկել ՀԿ-ների կարողությունների զարգացման ուղիները: Օրինակ՝ աջակցություն դրամահավաքի, կառավարման և վերապատրաստման միջոցով:

6. Ֆինանսավորման վերաբերյալ որոշումներ կայացնելիս հաշվի առնել յուրաքանչյուր տարածաշրջանի ժողովրդագրական, աշխարհագրական և մշակութային որոշակի մարտահրավերները:

Բաժին 4. Գործընկերային աշխատանքի և միջգերատեսչական համագործակցության կարևորությունը

Ստամբուլի կոնվենցիայի 20-րդ հոդվածը տարբերակում է բռնության և ընտանեկան բռնության գոհերի ընդհանուր և մասնագիտացված աջակցության ծառայությունները: Կոնվենցիայի վերաբերյալ բացատրական զեկույցում նշվում է.

Ընդհանուր աջակցության ծառայությունները վերաբերում են պետական մարմինների կողմից առաջարկվող օգնությանը, ինչպիսիք են սոցիալական ծառայությունները, առողջապահական ծառայությունները, զբաղվածության ծառայությունները, որոնք երկարաժամկետ օգնություն են տրամադրում և նախատեսված չեն բացառապես միայն գոհերի համար, այլ ծառայում են լայն հանրությանը: Ի հակադրում, մասնագիտացված աջակցության ծառայություններն ունեն մասնագետներ՝ տրամադրելով աջակցություն և օգնություն՝ հարմարեցված ընտանեկան բռնություն գոհերի՝ հաճախ անմիջական, կարիքներին և հասանելի չեն հանրությանը: Թեև դրանք կարող են լինել ծառայություններ, որոնք ղեկավարվում կամ ֆինանսավորվում են պետական մարմինների կողմից, մասնագիտացված ծառայությունների մեծ մասը տրամադրվում է ՀԿ-ների կողմից: (Հոդված 20)

Այս տարբերակումը կատարելով՝ Կոնվենցիան նաև 18-րդ հոդվածում ընդգծում է միջգերատեսչական համագործակցության կարևորությունը: Բացատրական զեկույցը մանրամասնում է այդ մասին հետևյալ կերպ՝ նշելով, որ առկա է միջգերատեսչական այս համագործակցությունը հնարավոր դարձնող մեխանիզմների առկայությունը ապահովելու պարտավորություն:

«Կոնվենցիայով խրախուսվող ընդհանուր միջգերատեսչական և համապարփակ մոտեցմանը համահունչ՝ 2-րդ պարբերությունը Կոնվենցիայի Կողմերից պահանջում է ապահովել, որ ազգային օրենսդրության համաձայն, լինեն համապատասխան մեխանիզմներ, որոնք ապահովում են արդյունավետ համագործակցություն հետևյալ գերատեսչությունների միջև, որոնք հեղինակները վերաբերելի են համարել՝ դատական համակարգը, դատախազությունը, իրավապահ մարմինները, տեղական և տարածքային իշխանությունները և ՀԿ-ները»: (Հոդված 18)

Հետևաբար, մասնագիտացված աջակցության ծառայությունները չեն կարող գործել և ապահովել պաշտպանության և աջակցության անհրաժեշտ մակարդակ առանց արդյունավետ միջգերատեսչական հաղորդակցության և համագործակցության, ինչպես նաև այլ ծառայությունների կողմից տվյալների տրամադրման և աջակցության:

Հետազոտությունը վկայում է այն մասին, որ ընտանեկան բռնության գոհերի անվտանգության և կարիքների արդյունավետ ապահովումը ամրապնդվում է միջգերատեսչական համագործակցության և ծառայությունների և շահագրգիռ կառույցների միջև համատեղ աշխատանքի շնորհիվ: (Shepherd M and Pence E, 1999թ.):

Ընտանեկան բռնության ազդեցությունները բարդ և լայնածավալ են և պահանջում են մի շարք մասնագետների ներդրում այնպիսի գերատեսչություններից, ինչպիսիք են ոստիկանությունը, սոցիալական ծառայությունները, առողջապահությունը, բնակարանային և զբաղվածության ծառայությունները՝ բավարարելու գոհերի պաշտպանության և

վերականգնման տարատեսակ կարիքները:

Թեև մասնագիտացված աջակցության ծառայությունները կենտրոնացված են զոհերի կարիքների շուրջ, նրանք ի վիճակի չեն հաջողությամբ գործել առանձին-առանձին: Գերատեսչությունների միջև համագործակցությունը և համայնքի համակարգված արձագանքը նշանակում է համարժեք պաշտպանության, համապատասխան աջակցության և դրական արդյունքների առավել մեծ հավանականություն:

Միջգերատեսչական սերտ համագործակցությունը ստեղծում է նաև համատեղ ուսուցման, ուսուցման փոխանակման և իրազեկվածության բարձրացման հնարավորություն: Կան նաև ոչ պետական կառույցների օրինակներ, ինչպիսիք են տեղական բիզնեսները, եկեղեցին և գործընկերային նախաձեռնություններում ներգրավված համայնքային այլ խմբեր, և նման մոդելները, որոնք կարող են դառնալ «աջակցող համայնք»:

Ընտանեկան բռնության զոհերի աջակցության ծառայությունները և գործընկերային աշխատանքը Հայաստանում

Մասնագիտացված կառույցների հետ հարցազրույցները, որոնց վրա հիմնված է այս զեկույցը, հանգեցրել են պետական կառույցների և մասնագիտացված աջակցության ծառայությունների միջև համագործակցային հարաբերությունների վերաբերյալ տարբեր տեսակետների՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական:

Գործընկերային աշխատանքը ոստիկանության և ընտանեկան բռնության զոհերի աջակցման ծառայությունների միջև

ԸԲՄԾ-ի և ոստիկանության միջև համագործակցությունը մեծ նշանակություն ունի զոհերի անվտանգության և բարեկեցության համար: Աշխատելով միասին՝ նրանք կարող են բարելավել անհրաժեշտ անհապաղ պաշտպանության միջոցներ և ապահովել ավելի երկարաժամկետ արդյունքներ:

ԸԲՄԾ-ի ներկայացուցիչների և ոստիկանության ծառայողների հետ քննարկումների ժամանակ անդրադարձ է կատարվել համատեղ աշխատելու հարցին՝ որպես իրենց տարածաշրջանների կարիքները ապահովելու՝ աջակցության ծառայությունների արդյունավետության գնահատման միջոց:

Ոստիկանության ծառայողի տեսանկյունից վերջին տարիներին զգալիորեն բարելավվել են աջակցության ծառայությունների և ոստիկանության միջև հարաբերությունները: Նկատելի է, որ երկու գերատեսչությունները...

“... աշխատել ենք մարտահրավերների ուղղությամբ և հասկացել, որ մենք հակառակ կողմերում չենք, և կարող ենք աշխատել միասին՝ ընդհանուր նպատակի հասնելու համար... Մենք գիտենք, որ զոհը կվստահի ընտանեկան բռնության ծառայությանը, ուստի նրանց հետ աշխատելը օգտակար է»:

Նշվեց, որ ընտանեկան բռնության ոլորտային օրենսդրության բարելավմանն ուղղված համատեղ ջանքերը նպաստել են գործընկերային աշխատանքի ձևավորմանը:

«Այժմ մենք ավելի լավ գիտենք, թե ինչպես դիմել ընտանեկան բռնության ծառայություններին, մենք աշխատել ենք նրանց հետ ուղղորդման ձևի մշակման ուղղությամբ, ոստիկանության բաժանմունքներում հասանելի ծառայությունների ցանկը ունենալու և համագործակցելու համար՝ զոհերի անվտանգությունը ապահովելու համար»:

Բերվել է այս բարելավված համագործակցության արդյունքի օրինակ: Եթե նախկինում ոստիկանությունը 20 օրով առգրավում էր հրազենը բռնարարից, այժմ ոստիկանության համար պարտադիր է ստուգել, թե արդյոք ընտանեկան բռնություն գործադրողի համար անվտանգ է զենք ունենալը, և մենք կարող ենք չեղարկել նրա իրավունքը:

“Մենք ձևավորել ենք աշխատանքային խումբ՝ բարձր ռիսկայնություն ունեցող դեպքերը դիտարկելու համար: Մենք կարող ենք ստուգել անցյալում կատարած հանցավոր գործողությունները և կնասպանության դեպքերը: Այս գործընթացը արդյունավետ է համապարփակ և փաստահավաք:

Ընտանեկան բռնության աջակցման ծառայությունների ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում ևս նմանատիպ արձագանք է ստացվել: Մասնակիցներից շատերը կարծիք հայտնեցին, որ իրենց աշխատանքային հարաբերությունները զգալիորեն բարելավվել են, և որ իրենք ավելի շատ են համագործակցում անվտանգության բարձրացման և զոհերի կարիքները բավարարելու ուղղությամբ: Ոմանք կարծում էին, որ որոշ ոստիկանների վերաբերմունքը վկայում է ընտանեկան բռնության գենդերային դիսամիկան ամբողջապես չըմբռնելու, իսկ վատագույն դեպքում՝ գենդերային նախապաշարմունքների մասին: Այնուամենայնիվ, կար ընդհանուր տեսակետ, որ համատեղ աշխատանքը զգալիորեն բարելավվել է, ինչը կնպաստի զոհերի և վերապրածների կարիքների ապահովմանը:

Նմանատիպ համագործակցությունն ուղղված է ընտանեկան բռնության զոհերի պաշտպանությանն ու աջակցության բարելավմանը և հանդիսանում է միջգերատեսչական ամուր համագործակցության օրինակ, ինչը բխում է Ստամբուլի կոնվենցիայից և այլ միջազգային չափորոշիչներից: Չարմանալի չէ սակայն, որ դեռևս կան մտահոգությունն առաջացնող հարցեր ինչպես ոստիկանության, այնպես էլ ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների տեսանկյունից, ինչպես նաև դեպքեր, երբ ոստիկանությունը կարծես թե պատշաճ կերպով չի արձագանքում զոհերի կարիքներին: Կարևոր է, սակայն, նկատի ունենալ, որ ընտանեկան բռնության աջակցության ծառայությունները և ոստիկանությունն ունեն տարբեր նպատակներ և առաջնահերթություններ: Գործընկերային և համագործակցային աշխատանքը կարող է օգնել հասկանալ այս տարբերությունները և օգտագործել դրանք համատեղ աշխատանքի հետագա բարելավման համար:

Սոցիալական ծառայությունների և ընտանեկան բռնության զոհերի աջակցության ծառայությունների միջև համագործակցությունը

Ծառայություններից մեկը, որի վերաբերյալ մտահոգություն կար ընտանեկան բռնության ընկալման և համապատասխան արձագանքների բացակայության առումով, Միասնական սոցիալական ծառայությունն էր (ՄՍԾ): ԸԲՄԾ-ի ներկայացուցիչները նշեցին արդյունավետ համագործակցության ուղիների բացի մասին: Հավելվեց, որ ՄՍԾ-ն քիչ թվով ուղղորդումներ է կատարում ընտանեկան բռնության աջակցության ծառայություններին, ինչպես նաև այս ծառայության ներգրավվածության դեպքերով մոտեցումներ են ցուցաբերվել զոհերի նկատմամբ՝ առանց վերջինիս վրա ընտանեկան բռնության խորը և տրավմատիկ ազդեցության և իրենց կյանքը վերակառուցելու համար ժամանակի անհրաժեշտության ըմբռնման: Ներկայացուցիչները վկայակոչեցին կանանց և երեխաների համար ռիսկի մակարդակի ընկալման բացակայությունը, հաճախ արտահայտվելով գենդերային կարծրատիպերի վրա հիմնված մոտեցումներով՝ իրավիճակի համար անուղղակիորեն մեղադրելով զոհին: Ոմանք նշեցին դեպքը վարող աշխատակիցների կողմից զոհերի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման դեպքեր, ինչը կարող է հանգեցնել երկրորդական զոհականացման կամ ինստիտուցիոնալ զոհականացման: ԸԲՄԾ-ի ներկայացուցիչների համար անհասկանալի են ՄՍԾ-ի կողմից ձեռնարկված դեպքերի վարման գործընթացները, ինչպես նաև առկա է որոշակի շփոթմունք դեպքերի վարման

պարտականությունների հետ կապված:

Այս մտահոգությունները արձագանք են գտել նաև ոստիկանության ծառայողների կողմից՝ նշելով, որ ՄՍԾ-ի գործառույթը գրեթե անհասկանալի է ընտանեկան բռնության զոհերի հարցում, սոցիալական աշխատողների համար արդյունավետ վերապատրաստումներ են անհրաժեշտ, և ՄՍԾ-ի ներգրավմամբ դեպքերի շրջանակներում պետք է ապահովել առավել լայն հաշվետվողականություն:

Միևնույն ժամանակ, սոցիալական ծառայությունների ներկայացուցիչներն էլ մտահոգություն հայտնեցին ԸԲՄԾ -ի, և ինչպես սոցիալական պաշտպանության համակարգի, այնպես էլ Միասնական սոցիալական ծառայությունների միջև հարաբերությունների վերաբերյալ: Շահագրգիռ կառույցների հետ հանդիպման ժամանակ որոշ սոցիալական աշխատողներ տեղեկացված չէին տեղական ԸԲՄԾ-ի գոյության մասին: Մտահոգություն է հայտնվել նաև երեխաների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության տարածման պակասի վերաբերյալ: Մասնագիտացված ծառայությունների և սոցիալական ծառայությունների միջև համակարգման և համագործակցության նման բացը հազվադեպ չէ: Ընտանեկան բռնության դեմ պայքարում արդյունավետ միջգերատեսչական համագործակցության վերաբերյալ իրենց ուսումնական աշխատությունում Լոգարը և Վարգովան անդրադարձ են կատարում այս խնդրին:

«...երբ մարդիկ աշխատում են միասին, բախումներ և լարվածություն կարող է առաջանալ: Երբեմն դա տեղի է ունենում նույնիսկ ավելի հաճախ, եթե հավաքվում են տարբեր գերատեսչությունների մասնագետներ. տարբեր գործառույթները, կարողունակությունները, կառուցվածքները, մասնագետները, մշակույթները և համոզմունքները կարող են խնդիրների և տարածայնությունների պատճառ դառնալ: Ժամանակ և ջանք է պահանջվում ամուր գործընկերություն կառուցելու համար, զոհերին՝ իրենց իրավունքների և կարիքների վրա հիմնված պաշտպանություն և աջակցություն տրամադրելու համար» (2015թ., էջ 61):

Հաշվի առնելով ԸԲՄԾ-ի ձևավորման կարճ ժամանակահատվածը, հասկանալի է նման բացերի առկայությունը: Մտահոգություն կա այնուամենայնիվ զոհերին և նրանց երեխաներին պատշաճ աջակցության տրամադրման առումով:

Համաձայն 2015 թ-ին ուժի մեջ մտած «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի, ՄՍԾ-ն պարտավոր է կատարել զննհատում և իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց դեպքերի վարում և ապահովել սոցիալական աջակցություն: Օրենքը սահմանում է «բարոյ կյանքի իրավիճակը», երբ անհատն ի վիճակի չէ ինքնուրույն լուծել իր դժվարությունները, ներառյալ այնպիսի իրավիճակներ, ինչպիսիք են խնամքից դուրս մնացած երեխաները, մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձինք, հաշմանդամություն ունեցողները, վտանգի տակ գտնվող երեխաները և նրանք, ովքեր վերապրել կամ խուսափել են բռնությունից և շահագործումից: Հետևաբար, ՄՍԾ-ն պարտավոր է աջակցել իրենց դիմող ընտանեկան բռնության զոհերին, և դեպքի վարումը իդեալական տարբերակում պետք է ներառի ուղղորդումներ և համատեղ աշխատանք ընտանեկան բռնության զոհերի աջակցության մասնագիտացված ծառայությունների հետ:

Հետևաբար, ՄՍԾ-ի, ինչպես նաև ԸԲՄԾ-ի համար կարևոր է աշխատել հաղորդակցության և համագործակցության բարելավման ուղղությամբ, ինչպես նաև հստակություն սահմանել տարբեր պարտականությունների շուրջ: Սոցիալական աշխատողների վերապատրաստումն ակնհայտորեն կարևոր է՝ հաշվի առնելով, որ ԸԲՄԾ-ի ներկայացուցիչներից շատերը կարծում էին, որ առկա են մարտահրավերներ զոհերի համար որոշ սոցիալական աշխատողների մշակութային և սոցիալական վերաբերմունքի առումով: Լավ կազմակերպված և անցկացված վերապատրաստումը հնարավորություն է նաև ստեղծում գաղափարների գեներացման, հաղորդակցության և խնդիրների լուծման համար,

որոնք կարող են մշակել համատեղ մոտեցումներ դեպքերի վարման շուրջ՝ յուրաքանչյուր դերակատարի/ծառայության գործառույթների շրջանակին համապատասխան:

Սոցիալական պաշտպանության համակարգը և երեխաների պաշտպանության ծառայությունները

Ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների հետ քննարկումները ցույց տվեցին, որ կանանց և նրանց երեխաների հետ աշխատելիս հիմնական մարտահրավերներից մեկը նրանց և երեխաների պաշտպանության ծառայությունների միջև համագործակցության բացակայությունն էր՝ պայմանավորված ընտանեկան բռնության մասին ընկալման պակասով, որն ազդում է երեխայի լավագույն շահի վրա, երբ խոսքը վերաբերում է խնամակալությանը: Խնամակալության հետ կապված հանդիպումները քննարկելիս զգացվում էր, որ սոցիալական աշխատողները միշտ չէ, որ նկատում են երեխաների և մայրերի կարիքները ընտանեկան բռնության և տրավմայի համատեքստում: Նշվեց, որ երեխաներին ուղղված ռիսկերը չեն գնահատվել, և բացակայում է սոցիալական ծառայությունների և ընտանեկան բռնության աջակցության աշխատողների տարաբնույթ պարտականությունների մասով հստակությունը:

Այս զեկույցի նպատակն է ոչ թե քննադատել կամ մեղադրել որևէ ծառայության, այլ բացահայտել, թե որտեղ կան մարտահրավերներ և բացթողումներ՝ օգնելու յուրաքանչյուր ԸԲՄԾ-ին, որպեսզի կարողանա աջակցել զոհերին իրենց տարբեր տարածաշրջաններում: Հաշվի առնելով ինչպես ՄՍԾ-ի, այնպես էլ համայնքային սոցիալական ծառայությունների դերը, երբ խոսքը ընտանեկան բռնության զոհերի և նրանց երեխաների մասին է, կարևոր է բացահայտել ուղիներ, ապահովելու այս բոլոր ծառայությունների միջև արդյունավետ աշխատանքային հարաբերությունների ձևավորման համար՝ պարզ միջգերատեսչական հաղորդակցությամբ և մարտահրավերներին միասնաբար դիմակայելու հնարավորությամբ՝ ի օգուտ զոհերի կարիքների ապահովման:

Ընտանեկան բռնության զոհերի աջակցության ծառայությունների և այլ գերատեսչությունների միջև համագործակցությունը

Ընդհանուր առմամբ, ԸԲՄԾ-ի ներկայացուցիչները կարծիք հայտնեցին, որ իրենց հարաբերությունները այլ գերատեսչությունների հետ ևս երբեմն բարդ են, ինչը խոչընդոտում է զոհերի անվտանգության ու վերականգնման ապահովմանը: Քննարկման առանցքային թեման ռիսկի գնահատման բացն էր: Նշվեց նաև, որ այլ մասնագետների շրջանում հաճախ առկա է կարծրատիպային բացասական վերաբերմունք կանանց նկատմամբ, որը որոշ մարզերում առավել տարածված է: Կանանց և երեխաների հետ աշխատելու հիմնական մարտահրավերներից մեկը ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների և երեխաների պաշտպանության ծառայությունների միջև համագործակցության բացակայությունն էր՝ պայմանավորված ընտանեկան բռնության մասին ընկալման բացով, ինչը ուղղակիորեն ազդում է երեխայի լավագույն շահի վրա, երբ խոսքը խնամակալության մասին է:

ԸԲՄԾ-ի ներկայացուցիչները նաև մտահոգություն հայտնեցին առողջապահական ծառայությունների մոտեցման վերաբերյալ, որը, նրանց կարծիքով, ցուցաբերում է «զոհակենտրոն մոտեցման համակարգային բացակայություն»: Նշվեց, որ դատաբժշկական փորձագետները հաճախ չեն ցուցաբերում զոհի նկատմամբ հարգալից վերաբերմունք, և իրենց մոտեցմամբ նորմալիզացնում են ընտանեկան բռնությունը: Կարծիք կա, որ փոքր գյուղական համայնքներում զոհերը հատկապես վտանգի տակ են, և առողջապահական ծառայությունները միշտ չէ, որ գիտակցում են անվտանգության և խորհրդապահության անհրաժեշտությունը:

ԸԲՄԾ-ի որոշ ներկայացուցիչներ նաև կարծում են, որ անհրաժեշտ է ամրապնդել հարաբերությունները հանրակրթական դպրոցների և ընդհանրապես կրթական հաստատությունների հետ:

Միջգերատեսչական համագործակցության ամրապնդումը

Ուսումնասիրելով ԸԲՄԾ-ի աշխատանքի բարելավման ուղիները Հայաստանում, կարևոր է գիտակցել ամուր և շարունակաբար բարելավվող միջգերատեսչական համագործակցության և գործընկերային աշխատանքի առավելությունները: Նման մոտեցումը ոչ միայն կիսթանի ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների կարողությունները իրենց գործունեության տարածաշրջաններում, այլև արդյունավետորեն կնպաստի այլ ծառայությունների աշխատանքին: Այսպիսով հնարավորություն է ստեղծվում համատեղ կարողությունների զարգացման և պատշաճ արձագանքման, ինչն իր հերթին կօգնի ռեսուրսների ճիշտ բաշխմանը: Թեև առկա են դրական համագործակցային կապեր, մասնավորապես ոստիկանության և ԸԲՄԾ-ի միջև, այլ գերատեսչությունների հետ համագործակցության ամրապնդումը հանդիսանում է այս զեկույցի հիմնական առաջարկությունը:

Լոգարը և Վարգովան (2015թ.) նշում են, որ «միջգերատեսչական աշխատանք» և «միջգերատեսչական համագործակցություն» տերմինները հաճախ օգտագործվում են փոխարինաբար: Նրանք նկարագրում են այս տերմինները որպես

«...կանանց և երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի արձագանքմանը ներգրավված տարբեր գերատեսչությունների միասնական աշխատանքի ընթացքն ու արդյունքները՝ միտված արդյունավետության բարձացմանը»:

Նրանք ընդգծում են, սակայն, որ թեև «գործընկերություն» տերմինը ենթադրում է, որ բոլոր գերատեսչություններն ու ներգրավված կառույցները հավասար դիրք ունեն, սակայն դա այդպես չէ: Վերջիններս բաժանվում են իրենց չափերով, հզորությամբ, կարգավիճակով, կառուցվածքով, ռեսուրսներով և պարտականություններով պայմանավորված: Հետևաբար, կարևոր է ուշադրություն դարձնել այս տարբերություններին, «հավասարակշռել դրանք, որտեղ հնարավոր է և հաշվի առնել դրանց ազդեցությունը համատեղ աշխատանքի վրա» (Էջ 10, 2015թ.):

Կարևորն այստեղ այն է, որ արդյունավետ միջգերատեսչական աշխատանքը պետք է հաշվի առնի ծառայությունների միջև եղած ռեսուրսների տարբերությունները, իսկ Հայաստանում ԸԲՄԾ-ի դեպքում պետք է տեղյակ լինի, որ նրանց ռեսուրսները սահմանափակ են, որոշները համեմատաբար նոր են ձևավորված և որ նրանց դերը կենտրոնացած է զոհերի պաշտպանության վրա: Կարևոր է նաև, որ պետական մարմինները տեղյակ լինեն, որ այս փոքր մասնագիտացված ՀԿ-ները հաճախ բախվում են զգալի մարտահրավերների՝ պայմանավորված կարծրատիպային վերաբերմունքով, բայց միևնույն ժամանակ նրանց փորձը կենսական նշանակություն ունի զոհերի և նրանց երեխաների հետ համատեղ արդյունավետ աշխատանքի համար:

Վերջիններս նշում են հետևյալ կետերը՝ որպես միջգերատեսչական ամուր համագործակցության կառուցման ուղեցույց և գերատեսչությունների միջև բախումներից խուսափելու ուղենիշ.

- ղեկավարության մակարդակով հստակ տրամադրվածություն ներգրավված բոլոր կազմակերպությունների և հաստատությունների կողմից.
- շարունակականություն՝ միջգերատեսչական աշխատանքներին մասնակցելու առումով.

- Ժամանակ և ռեսուրսներ ներդնելու պատրաստակամություն՝ բախումների և լարվածության դեմ պայքարելու համար միջգերատեսչական աշխատանքում՝ տրամադրելով տարածք և աջակցություն կառուցողական մտորումների և քննարկումների համար:

Միջգերատեսչական համագործակցության վրա հիմնված աշխատանքի վերաբերյալ առաջարկություններ

Հաշվի առնելով ուստիկանության և ԸԲՄԾ-ի միջև գործընկերային աշխատանքի զգալի բարելավումը, ակնհայտ է, որ միջգերատեսչական համագործակցության շնորհիվ հնարավոր է առկա ռեսուրսների արդյունավետ բաշխումը և ռիսկերի նվազեցմանն ուղղված ջանքերի ընդլայնումը և կրկնակի զոհականացման դեպքերից խուսափումը՝ հնարավորություն ընձեռնելով զոհերին վերականգնվել: Այն նաև հանդիսանում է ԸԲՄԾ-ի կարողությունները զարգացնելու և արդյունավետությունը բարձացնելու առանցքային միջոց:

Առաջարկություն

7. Կարևոր է մշակել միջգերատեսչական համագործակցության հստակ գործելակարգեր, որոնք շարունակական կերպով կգնահատեն ռիսկերն ու կարիքները

ԸԲՄԾ-ի քարտեզագրումը ցույց տվեց, որ այս համատեղ աշխատանքի մի մասը սկզբունքորեն արդեն կատարվել է ուստիկանության և աջակցության կենտրոնների կողմից: Միջգերատեսչական համագործակցության ուղիներն էլ ավելի կատարելագործելու և այլ առանցքային գերատեսչությունների և կառույցների առավել ակտիվ ներգրավումն ապահովելուն ուղղված գործողությունների ծրագիրը կհանդիսանան ԸԲՄԾ-ի կարողությունների զարգացման և աշխատանքի բարելավման հիմնական միջոցները:

Առաջարկություն

8. Պետք է մշակել ուղեցույցների համապարփակ փաթեթ, որը կծառայի որպես սոցիալական աշխատողների վերապատրաստման գործիք բոլոր սոցիալական ծառայությունների, այդ թվում Միասնական սոցիալական ծառայությունների շրջանակներում: Պետք է անցկացնել համապարփակ վերապատրաստումներ գենդերային բռնության, տրավմացտեղեկացված պրակտիկայի, ինտերսեկցիոն մոտեցումների և ընտանեկան բռնության զոհերի փորձի ըմբռնման թեմաներով:

ԸԲՄԾ -ի և այլ գերատեսչությունների՝ ուստիկանության և ՄՄԾ-ի պարտականությունները

Ստամբուլի կոնվենցիան ոչ միայն կոչ է անում պետական կառույցներին ներդնել վկայակոչված դրույթները օրենսդրության և քաղաքականության մշակման միջոցով, այլ նաև ընդգծում է մասնագետների՝ Կոնվենցիայի դրույթների ապահովման մաս դարձնելու կարևորությունը: Սա նշանակում է, որ բոլոր գերատեսչությունները ունեն պատշաճ արձագանքման և ընտանեկան բռնության երևույթը գենդերային համատեքստում ճիշտ ընկալելու պարտավորության բաժին: Այլ կերպ ասած, բոլոր գերատեսչությունները և աշխատակիցները կրում են այս պատասխանատվությունը, սակայն յուրաքանչյուրն ունի տարբեր լիազորություններ և պարտականություններ:

Այնուամենայնիվ, երբ գերատեսչությունների միջև հաղորդակցության և

համագործակցության բաց կա, կարող է խառնաշփոթ առաջանալ, և հստակության բացակայությունը կարող է հանգեցնել բացասական հետևանքների զոհերի համար: Երբ ռիսկերի համատեղ կառավարում չի իրականացվում, հավանական են զոհերի համար առավել մեծ ռիսկային իրավիճակներն ու դեպքերը: ԸԲՄԾ -ի հետ քննարկումը ցույց տվեց, որ անհստակություն է առկա և՛ իրենց, և՛ ՄՍԾ-ի կողմից դեպքերի վարման մասով, ինչպես նաև այլ ծառայությունների, այդ թվում՝ երեխաների պաշտպանության մարմինների տարաբնույթ պարտականությունների վերաբերյալ:

Այդ իսկ պատճառով, շատ կարևոր է, որ աշխատանք կատարվի պարզաբանելու, թե ինչ առանձին պարտականություններ ունի յուրաքանչյուր գերատեսչություն ընտանեկան բռնության զոհերի հետ աշխատելիս: Այս տվյալները կարող են ներառվել ուսումնական նյութերի մեջ և քննարկվել միջգերատեսչական համաժողովի ընթացքում: Նման մոտեցումը կարևոր է պատշաճ գործելակերպերի ապահովման համար՝ նվազեցնելով գերատեսչությունների և ներգրավված կառույցների միջև բախումները, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով առավել ճշգրիտ բաշխել առկա ռեսուրսները: Ամենակարևորը, որ այս պարագայում զոհերը հստակ կիմանան, թե որ կառույցն է աջակցում իրենց և որ ոլորտներում:

Ընտանեկան բռնությունը համալիր երևույթ է և ազդում է զոհերի սոցիալական և հոգեբանական կյանքի լայն շրջանակի վրա: Այն կարող է ազդել առողջության, հոգեկան առողջության, վերարտադրողական առողջության, կեցության, ֆինանսների, կրթության և աշխատանքի վրա: Հետևաբար, զոհերը ոչ միայն իրավունք ունեն ստանալ մասնագիտացված արձագանք, ինչպիսին է Հայաստանում ԸԲՄԾ-ի տրամադրած աջակցությունը, այլ նաև ավելի ընդհանուր ծառայությունների շրջանակ, որոնք ներառում են ոչ միայն ոստիկանությունը և ՄՍԾ-ն, այլև առողջապահությունը, կրթությունը, զբաղվածության և բնակարանային ծառայությունները: Բացի այդ, համապարփակ արձագանքման մաս կարող են կազմել այլ տեղական համայնքային միավորումները, ինչպիսիք են գործատուները և տեղական համայնքային խմբերը/ՀԿ-ները:

«Համայնքային համակարգված արձագանքը» մոդել է, որտեղ բոլոր գերատեսչություններն ու կառույցները որոշակի պատասխանատվություն են ստանձնում ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության և աջակցության տրամադրման համար, և որտեղ առկա է հստակություն, թե որ ծառայությունն է պատասխանատու զոհի իրավիճակով պայմանավորված այս կամ այն հարցի լուծման և օգնության համար:

Առաջարկություններ.

9. Համատեղ քննարկումների անցկացում ԸԲՄԾ-ի և այլ գերատեսչությունների միջև, ինչպիսիք են առողջապահությունը, ՄՍԾ-ն, ոստիկանությունը, կացության և զբաղվածության ծառայությունները, որպեսզի հստակություն ապահովվի ընտանեկան բռնության զոհերի դեպքերով միջգերատեսչական համագործակցության վերաբերյալ:

10. Մշակել և տեղական մակարդակներում ներդնել միջգերատեսչական կանոնավոր հանդիպումների մոդել՝ պատասխանատվության հստակ ուղղություններով: Այս առումով կապահանջվի ղեկավար կազմի հավանությունը:

Բաժին 5. Առաջարկությունների և գործելակերպերի օրինակների ուսումնասիրություն.

Սույն գեկույցի նպատակն է անդրադառնալ ՀՀ-ում վերջերս ստեղծված ԸԲՄԾ-ի վերաբերյալ ԱՍՀՆ-ին հուզող հարցերին և ոլորտներին.

- ԸԲՄԾ-ի կողմից մատուցվող ծառայությունների գնահատման հնարավոր համակարգի մշակում:
- համապատասխանաբար յուրաքանչյուր մարզում ընտանեկան բռնության դեպքերով զբաղվող ԸԲՄԾ-ի կարողությունը (յուրաքանչյուր մարզի չափը/ ժողովրդագրական կազմը տարբեր է):
- ԸԲՄԾ-ի և մարզերում աջակցության այլ ծառայությունների համագործակցության մակարդակը, մասնավորապես՝ ՄՍԾ-ի հետ հարաբերությունները, որոնք կենտրոնական և տարածաշրջանային մակարդակներում պետական պաշտպանության հիմնական կառույցներն են:
- ԸԲՄԾ-ի և այլ ծառայությունների, ինչպիսիք են ոստիկանությունը և ՄՍԾ-ն, պարտականությունները:

Չեկույցի 1-4-րդ բաժիններում ներկայացված են առկա ծառայությունների նախապատմությունը և ընդհանուր պատկերացումները, ուժեղ կողմերն ու մարտահրավերները, ինչպես նաև այլ գերատեսչությունների հետ հարաբերությունները: Այս նպատակով ուսումնասիրվել են ԱՍՀՆ-ի կողմից առաջադրված հարցերը: Այս բաժիններում ներկայացված են առաջարկություններ, որոնք գտնում ենք, որ բավականաչափ ճկուն են ԱՍՀՆ-ի կողմից դիտարկվելու համար:

Այս վերջին բաժինը նպատակ ունի ավելի մանրամասն ուսումնասիրել այս առաջարկությունները՝ օրինակների և խորհուրդների միջոցով: Այն ներառում է մի քանի միջազգային օրինակներ, որոնք նպատակ ունեն օգնելու դիտարկել, թե ինչպես են այլ երկրները զարգացրել իրենց ԸԲՄԾ -ները: Այն նաև ներառում է առաջարկություններ այն մասին, թե ինչպես այդ օրինակները կարող են հարմարեցվել կամ փոփոխվել Հայաստանի տարբեր շրջաններում՝ հատուկ ժողովրդագրական, ինստիտուցիոնալ և մշակութային կարիքներին համապատասխանելու համար: Բաժինը ներառում է նաև որոշ հղումներ համացանցից՝ օրինակների և առաջարկների վերաբերյալ լրացուցիչ համապատասխան տեղեկությունների տրամադրման համար, որոնք կարող են օգտակար լինել:

Առաջարկություններ, խորհուրդներ և օրինակներ

1. Ընդլայնել վիճակագրական մշտադիտարկումը՝ ավելի լավ հասկանալու մարտահրավերները ինչպես ԸԲՄԾ-ի, այնպես էլ այլ գերատեսչությունների և ընտանեկան բռնության զոհերի համար

Սույն գեկույցով առաջարկվում է ԱՍՀՆ-ին, ԸԲՄԾ-ի և բոլոր համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ, ձգտել հարստացնել վիճակագրական տվյալների հավաքագրումը: Առաջարկությունը ներառում է թվայնացված տվյալների բազայի հարթակի ստեղծման հարցում առաջխաղացում, ինչպես նաև վիճակագրական տվյալների հավաքագրման ընդլայնում՝ բացերի և առկա միտումների ավելի ամբողջական

պատկերացում ստեղծելու համար: ԸԲՄԾ-ի արդյունավետությունն ու ազդեցությունը հասկանալու համար հատկապես կարևոր է արդարադատության համակարգերում զոհերի առնչությամբ վիճակագրական տվյալների հավաքագրումը, հատկապես, երբ խոսքը դատական գործերի մասին է:

Բացի այդ, օգտակար կլինի ընդգրկել և հղում կատարել ընտանեկան բռնության վերաբերյալ ցանկացած պետական այլ գերատեսչությունների կողմից հավաքված վիճակագրական տվյալների, ինչպիսիք են առողջապահությունը, արդարադատությունը կամ կրթությունը, ինչպես նաև ՀԿ-ների տվյալները: Այս առումով կարևոր է, որ լայն շրջանակի գերատեսչություններ ներգրավվեն և հետամուտ լինեն Ստամբուլի կոնվենցիայի դրույթներին (հոդված 11): Սեռային պատկանելությամբ տարանջատված տվյալների փոխանակումը առանցքային է ընտանեկան բռնության ծառայությունների մշակման և արձագանքման միջգերատեսչական մոտեցման համար: Թեև այս առաջարկությունը ընդգծում է ԱՍՀՆ-ի՝ ԸԲՄԾ-ից իր վիճակագրական տվյալների շտեմարանը ընդլայնելու ներուժը, Էականորեն կնպաստի նաև՝ այլ գերատեսչությունների հետ աշխատանքը՝ ապահովելով տվյալների ներկայացման ավելի լայն միջգերատեսչական մոտեցում և հնարավորություն տալով ուսումնասիրել դրա արդյունքները (հոդված 11, 1, բ):

Գործնական օրինակ. Հարցումներ Բոսնիայում և Հերցեգովինայում

Բոսնիա և Հերցեգովինայում Ստամբուլի կոնվենցիայի վավերացման ուղղությամբ աշխատելիս մի քանի հարցումներ են իրականացվել կանանց նկատմամբ բռնության տարածվածության, պատճառների և հետևանքների վերաբերյալ: 2012 թ-ին Գենդերային հավասարության գործակալությունը, համագործակցելով մի շարք համապատասխան կառույցների, այդ թվում՝ կանանց ՀԿ-ների հետ, իրականացրել է մի շարք հետազոտություններ՝ նպատակ ունենալով բացահայտել կանանց նկատմամբ բռնության իրական չափը: Հետազոտությունը հրապարակվել է 2013 թ-ին և եղել է առաջին լայնածավալ հետազոտությունը, որն արվել է Բոսնիա և Հերցեգովինայում: Դրան հաջորդեցին հետազոտություններ, որոնք հատուկ ուշադրություն էին դարձնում Բոսնիա և Հերցեգովինայում ընտանեկան բռնության բնույթին և տարածվածությանը (Sesar, 2013թ.):

Այս գործնական օրինակը ցույց է տալիս միջգերատեսչական տվյալների հավաքագրման ավելի լայն արդյունքները: Թեև ԱՍՀՆ-ն կարող է զգալի պատկերացում կազմել՝ ավելացնելով ԸԲՄԾ ցանցի գործունեության վերաբերյալ իր վիճակագրական տվյալները, ավելի լայն վիճակագրական տվյալները կարևոր տեղեկատվություն կապահովեն ԸԲՄԾ յուրաքանչյուր տարածաշրջանում տարբեր իրավիճակների վերաբերյալ: Այն կարող է կարևոր տեղեկատվություն տրամադրել յուրաքանչյուր տարածաշրջանի և յուրաքանչյուր ԸԲՄԾ-ի առջև ծառացած կարիքների և մարտահրավերների գնահատման համար, որը կարող է ֆինանսավորման գնահատման կարիք առաջացնել: Նման հարցումները կարևոր են, քանի որ դրանք օգնում են քաղաքականություն մշակողներին ստեղծել Ստամբուլի կոնվենցիայի դրույթներին համապատասխան ռազմավարություն և մշակել բյուջեներ, որոնք կներառվեն ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային գործողությունների պլանավորման մեջ:

Վիճակագրական տվյալների հավաքագրման ընդլայնումը կարող է քննարկվել միջգերատեսչական համաժողովի կամ աշխատաժողովի շրջանակներում և դիտվել որպես պատշաճ արձագանքի ապահովման և ԸԲՄԾ-ի աշխատանքին աջակցելու միջոց: Նման աշխատաժողովի կազմակերպումը ևս մեկ առաջարկություն է, որը մանրամասն քննարկվում է 11-րդ կետի ներքո:

2. Իրականացնել որակական մշտադիտարկում, ներառյալ դեպքերի ուսումնասիրությունը և ապացույցների հավաքումը՝ զոհերի համար վերաբերելի գործընթացների արդյունքները: Դրանք կարող են օգտակար լինել զոհի անցած ճանապարհի և վերականգնման ընթացքում առաջացած խոչընդոտների վերաբերյալ ավելի խորը պատկերացում կազմելու հարցում

Չեկույցն առաջարկում է ԱՍՀՆ-ին դիտարկել ԸԲՄԾ-ի որակի և հաշվետվողականության ավելի խորքային մշտադիտարկման ուղիներ՝ զոհերի և ԸԲՄԾ-ի համար իրավիճակների ավելի համապարփակ պատկերացում ձևավորելու համար: Քննարկման ընթացքում ԱՍՀՆ-ի ներկայացուցիչները արտահայտեցին ԸԲՄԾ-ի կողմից տրամադրվող աջակցության տարբեր բաղադրիչների վերաբերյալ ոչ հստակ ընկալված պատկերացումներ: Օգտակար կլինի հասկանալ ծառայության տարբեր տեսակների աջակցության ծառայություններ տրամադրողների դերերը, ինչպիսիք են օրինակ իրավապաշտպանը կամ հոգեբանը: Տարբեր ուղղություններով վերջնարդյունքների վերաբերյալ տվյալների տրամադրումը կարող է լինել օգտակար հատկապես, եթե արդյունքները չափվում են ծառայության յուրաքանչյուր կոնկրետ տեսակի մասով:

Վերջնարդյունքների մոդելի օգտագործում

Այսպիսի տվյալների հավաքագրման նպատակով անհրաժեշտ է դիտարկել, թե ինչ արդյունքներ կցանկանա արտեսնել ԱՍՀՆ-ն ընտանեկան բռնության զոհերի հետ աշխատանքի շնորհիվ: Արդյունքների ներկայացման մոդելները կարող են չափել այն փոփոխությունը, որը տեղի է ունեցել զոհի մոտ աջակցության տրամադրման արդյունքում: Բացահայտելով աջակցության արդյունքում գրանցված փոփոխություններն ու հաջողությունը, ինչպես նաև դրան հասնելու խոչընդոտները կնպաստեն ծառայության համապատասխան տեսակի բարելավմանը: Այս մոդելը զոհակենտրոն է և զոհն ինքն էլ աշխատելով մասնագետների հետ փորձում է պարզել թե ինչ փոփոխություններ է ցանկանում տեսնել և նախանշում է համապատասխան նպատակներ:

Չափման այս ձևի համար լայնորեն կիրառվող մոդել է Վերջնարդյունքների կամ Հզորացման աստղը (Տեղեկությունները կարելի է գտնել <https://outcomesstar.com.au/getting-started/choosing-the-right-star/domestic-violence/> հղումով), և մոդելը կիրառվելով ԸԲՄԾ-ի շրջանակներում հարմարեցված է տեղական կարիքներին և գործում է մի շարք երկրներում: Մոդելի կարևորությունը նրանում է, որ մասնագիտացված ծառայությունը և զոհը կանխորոշում են աջակցության արդյունքներն ու սպասելիքները, ինչը նվազեցնում է աջակցության ծառայություններից կախվածությունը և համակարգում սպասելիքները: Նոր Չեկանդիայում Հզորացման աստղը իր պրակտիկայում կիրառող ծառայության օրինակի վերաբերյալ լրացուցիչ մամլամասները հասանելի են ([OS-CaseStudy_NCIWR-EmpowermentStar.pdf](#)):

Հզորացման աստղը մշտադիտարկման ընդամենը մեկ օրինակ է, որը կարող է օգտագործվել առաջընթացը չափելու և զոհերի հետ վերջնականապես նախանշելու համար՝ անվտանգության ապահովման և վերականգնմանն ուղղված միջոցառումների ընթացքում: Այն կարող է հեշտությամբ հարմարեցվել ԱՍՀՆ-ի կողմից ցանկալի վերջնարդյունքների պահանջներին: Ստորև ներկայացվում է վերջնարդյունքների օրինակ, որը կարող է դիտարկվել ԱՍՀՆ-ի կողմից: Այն կարող է փոփոխվել և հարմարեցվել հատուկ պահանջներին համապատասխան:

Չոհերի հետ ԸԲՄԾ աշխատանքի համար պահանջվող վերջնարդյունքների

օրինակներ

Հետևյալ վերջնարդյունքները կարող են չափվել գոհին տրամադրվող աջակցության ողջ ընթացքում՝ 1-10 սանդղակով: Դրանք գոհին և ԸԲՄԾ-ին հնարավորություն են տալիս չափել նպատակների ուղղությամբ ունեցած առաջընթացը՝ կապված անվտանգության, վստահության, ֆինանսների և այլնի հետ: Դրանք սահմանվում են աջակցության սկզբում և պարբերաբար վերանայվում են:

Արդյունքների չափումը թույլ է տալիս ԸԲՄԾ-ին գնահատել իրենց աջակցության առաջընթացը, ինչպես նաև ներկայացնել դրանք չափելի տարբերակով ԱՍՀՆ-ին:

Ստորև ներկայացված վերջնարդյունքները օրինակներ են և կարող են հարմարեցվել:

Չոհի կողմից տրվող գնահատականը (1-ից 10)	Վերջնարդյունք
Իրեն զգում է ավելի ապահով	Անվտանգության ավելացում
Գտնում է, որ ձեռք է բերել ֆինանսական միջոցների նկատմամբ ավելի մեծ վերահսկողություն	Ֆինանսական անկախության ավելացում
Իր տանը զգում է ավելի անվտանգ	Բնակարանային անվտանգության ավելացում
Ավելի լավ է զգում հոգեպես և բարոյապես	Չոգեկան առողջության բարելավում
Ավելի ինքնավստահ է մյուսների հետ հաղորդակցվելու և այլոց վստահելու հարցում	Սոցիալական հարաբերությունների բարելավում
Չգում է, որ ոստիկանությունը / դատարանները ապահովել են իր պաշտպանությունը	Ոստիկանության և քրեական արդարաստիքային համակարգի նկատմամբ վստահության ավելացում
Իրեն ավելի ունակ է զգում սատարելու երեխաներին	Ինքնավստահության և ծնողավարման բարելավում

Ընդլայնված որակական տվյալների հավաքագրման արդյունքում ԱՍՀՆ-ն կունենա ավելի համապարփակ պատկերացում ԸԲՄԾ-ի աշխատանքի վերաբերյալ, իսկ վերջիններս ավելի մեծ հաշվետվողականություն կունենան իրենց աշխատանքի համար: Եթե ծառայություններն արդեն օգտագործում են վերջնարդյունքների ձևանմուշ՝ իրենց աշխատանքի առաջընթացը չափելու համար, ապա օգտակար կլինի այն հավաքել, և հնարավորինս լրամշակել պատրաստվող թվային տվյալների բազան:

Դեպքերի ուսումնասիրությամբ վերջնարդյունքների սահմանում

Դեպքերի ուսումնասիրությունն իրոք ավելի խորը պատկերացում է տալիս աշխատանքի վերջնարդյունքների վերաբերյալ, որոնց ԸԲՄԾ-ն հասնում է առանձին դեպքերում, ինչպես նաև նպաստում է խնդիրների բացահայտմանը: Այնուամենայնիվ, դրանք կարող են լինել ավելի շատ նկարագրական, քան վերլուծական, ուստի օգտակար կլինի պահանջել դեպքի ուսումնասիրության ձևանմուշի կիրառություն, որը կբացահայտի կոնկրետ արդյունքներն ու մարտահրավերները: Ի լրումն, ԱՍՀՆ-ն կարող է անհրաժեշտության դեպքում նախատեսել դեպքերի պարզաբանումներ ծառայության հատուկ տարրերի վերաբերյալ, ինչպիսիք են խորհրդատվությունը կամ իրավաբանական աջակցությունը: Նման մոտեցումը լրացուցիչ պատկերացում կստեղծի ծառայությունների ծախսարդյունավետության և հաջող իրագործման վերաբերյալ:

Դեպքի ուսումնասիրությունների ձևանմուշ

Իրավիճակը

Նկարագրեք զոհի վիճակը, երբ վերջինս առաջին անգամ դիմել է ԸԲՄԾ-ին, ներառյալ ընտանեկան բռնության աստիճանը և ժամանակահատվածը, երեխաների վիճակը, ազդեցությունը առողջության/հոգեկան առողջության վրա, ֆինանսական, կեցության, վստահության մասին տվյալները: Որտեղի՞ց է ուղղորդում իրականացվել:

Չոհի հետ տարված աշխատանք

Ինչ աշխատանք է տարվել զոհի հետ՝ ապահովելու նրա անվտանգությունը: Ինչ իրավաբանական աջակցություն է ցուցաբերվել: Չոհը խորհրդատվություն ստացել է: Որքա՞ն է այն ընթացել:

Գործին ներգրավված այլ գերատեսչություններ

Ո՞ր գերատեսչություններն են ներգրավվել գործին և արդյոք նրանք նույնպես տրամադրել են հավելյալ աջակցություն:

Ձեռքբերումներ և մարտահրավերներ

Սահմանել անվտանգության և վերականգնման ճանապարհն առկա խոչընդոտները, ինչպիսիք են օրինակ այլ ծառայությունների հետ համագործակցությանն ուղղված խնդիրները:

Դեպքի վարման արդյունքները

Ինչպես է ԸԲՄԾ-ն գնահատում դեպքի շրջանակներում ձեռքբերված արդյունքները զոհի շահերի համար: Ինչպե՞ս են դրանք համընկնում այն վերջնարդյունքների հետ, որոնց ԱՍՀՆ-ն ձգտում է հասնել: Կա՞ն արդյոք լրացուցիչ արդյունքներ կամ ավելացված արժեք: Հնարավորության դեպքում ներառեք զոհի կողմից արված մեջբերումները՝ ներկայացանելու նրա տեսակետը տրամադրված աջակցության վերաբերյալ:

3. Ներդնել ԸԲՄԾ-ի հավատարմագրման համակարգ, որը ԱՍՀՆ-ին կտրամադրի որակի չափանիշների երաշխիք, ինչպես նաև կապահովի ռազմավարական կարողությունների և գիտելիքների շարունակական ապահովումը: Իդեալական տարբերակում այն պետք է համակարգվի անկախ կազմակերպության կողմից

Հավատարմագրումը ոչ միայն կբարելավի ԸԲՄԾ-ն որպես ամբողջություն, այլ կդարձնի այն ավելի հաշվետու ԱՍՀՆ-ի և այլ գերատեսչությունների առջև: Քննարկումից ենթադրվում է, որ ԸԲՄԾ-ն նույնպես ունեն սման տեսլական:

Գործնական օրինակ.

Անգլիայի կանանց օգնության ֆեդերացիա (WAFE) (www.womensaid.org.uk) WAFE-ն ընտանեկան բռնության տեղական ծառայությունների անդամակցության արդյունքում ձևավորված կազմակերպություն է: Ֆեդերացիան ունի բազմաթիվ անդամներ Մեծ Բրիտանիայից, որոնք ծառայում են տարբեր տեղական և տարածաշրջանային համայնքներին: WAFE-ն իր անդամների համար մշակել է հավատարմագրման գործընթաց՝ ընտանեկան բռնության մասնագիտացված աշխատանքում «Որակի ազգային չափորոշիչներին» հասնելու համար: Չափորոշիչները մասնագիտացված ծառայություններից կարող են պահանջել ավելի քան մեկ տարվա աշխատանք՝ որակի և համապատասխան գործելակերպերի ապահովմամբ ամուր համակարգ ստեղծելու և առաջարկելու համար: Հավատարմագրված լինելը նաև նշանակում է, որ նրանք ունեն որակի հավաստման վկայական: WAFE-ն անդամակցության վրա հիմնված կազմակերպություն է, և անկախ է իր անդամներից ուստի կարող է ապահովել անկախ մարմնի կողմից՝ առանց շահերի բախման հավատարմագրման գործընթացը: WAFE-ի որակի ազգային չափորոշիչները հիմնված են Եվրոպայի խորհրդի նվազագույն չափորոշիչների վրա: Հավատարմագրման այս մոդելը կարող է հարմարեցվել ԸԲՄԾ-ին Հայաստանում՝ զարգացնելով գործող համակարգը և որակի գնահատման գործընթացին պաշտոնական բնույթ հաղորդելով:

Նմանապես, Իռլանդիան մշակել է հավատարմագրման համակարգ՝ Ստամբուլի կոնվենցիայի սկզբունքների հիման վրա. դրա իրականացման վերաբերյալ մանրամասն ուղեցույցներ կարելի է գտնել այստեղ: <https://www.safeireland.ie/wp-content/uploads/A-Framework-Principles-and-Standards-for-Specialist-DV-Services.pdf>: Այն օգտակար փաստաթուղթ է՝ չափորոշիչների տարբեր ասպեկտները մանրամասն ներկայացնելու համար, որոնց ԸԲՄԾ-ն պետք է հասնի, ինչպես նաև դրանց ներդրման եղանակը ներկայացնելու համար: Աշխատանքն իրականացվում է «SAFE Ireland»-ի կողմից, որը անկախ, ռազմավարություն մշակող կառույց է, որի նպատակն է ԸԲՄԾ ոլորտում որակի չափորոշիչների ապահովումը:

Հավատարմագրման համակարգը երաշխավորում է ԱՍՀՆ-ին և պետական այլ մարմիններին, որ ԸԲՄԾ-ն աշխատում է համապատասխան չափորոշիչներով և Ստամբուլի կոնվենցիայի սկզբունքների համաձայն: Դա նաև կնշանակի բարելավում և հաշվետվողականության բարձրացում ֆինանսավորողների և այլ գործակալությունների նկատմամբ: Այս առաջարկությունն ուսումնասիրելիս ԱՍՀՆ-ն կարող է դիտարկել, թե ինչպես կարող է իրականացվել հավատարմագրումը: Իդեալական տարբերակում, նման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը պետք է իրականացվի մի կազմակերպության կողմից, որն անկախ է ԸԲՄԾ-ից և այլ ներգրավված գերատեսչություններից: Նման աշխատանքը կարող է պատվիրվել հավատարմագրման մասնագիտացված կազմակերպությանը, կամ ԱՍՀՆ-ն կարող է նախարարության ներսում մշակել մի համակարգ, որը գինված կլինի համապատասխան մասնագիտական գիտելիքներով: Այս միտումը ներդրում կլինի որակի և երաշխիքի ապահովման ուղղությամբ, որը պետք է հաշվի առնել:

4. Աջակցել ԸԲՄԾ-ներին անձնակազմի և կամավորների համար մասնագիտական վերապատրաստման դասընթացի մշակմանը և ուսումնասիրել պաշտոնական որակավորման հնարավորությունը: Այն կարող է իրականացվել համալսարանների և ուսումնական հաստատությունների ներգրավմամբ

Թեև քննարկումները ցույց են տալիս, որ ԸԲՄԾ-ում առկա է համատեղ կարողությունների զարգացման ձևավորված ավանդույթ և պրակտիկա, որակավորումների ավելի պաշտոնական համակարգը կձևավորի կարողությունների և գիտելիքների առավել լայն շրջանակ և կապահովի դրանց կատարելագործումը: Տարբեր երկրներում դրանք մշակվել են անկախ ՀԿ-ների կամ սոցիալական ձեռնարկությունների կողմից և զգալի կարողություններ են ձևավորել ԸԲՄԾ ոլորտում: Բացի այդ, այն հնարավորություն կտա ԱՄՅՆ-ին ավելի լավ պատկերացում կազմել ծառայությունների տրամադրման տեսանկյունից տարբեր դերերի և աշխատանքի նկարագրությունների համար անհրաժեշտ մասնագիտական փորձի մասին:

Գործնական օրինակ՝ “Safelives”

Միացյալ Թագավորությունում գտնվող Safelives-ը տրամադրում է տարատեսակ ուսուցում ընտանեկան բռնության մասնագիտացված աշխատանքի վերաբերյալ: Ընտանեկան բռնության դեմ պայքարի անկախ շահերի պաշտպանի նրանց մոդելը օգտակար կլինի վերլուծելու ընտանեկան բռնության ոլորտում դերերի բաշխման համար անհրաժեշտ հմտությունների վերաբերյալ: Վերջինս իրավաբան չէ, բայց ունի օրենքի և քրեական արդարադատության համակարգի խորը գիտելիքներ ընտանեկան բռնության առաջնություն: Նրանք հանդես են գալիս որպես մասնագիտացած շահերի պաշտպաններ և հուզական աջակցություն են ցուցաբերում զոհերին: Այս աշխատանքի նկարագրությունը կարելի է գտնել Safelives կայքում: Safelives-ը նաև իր կայքում www.safelives.org.uk, մի շարք լեզուներով տրամադրում է ռեսուրսներ, որոնք օգտակար են ընտանեկան բռնության մասնագետների համար անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու համար:

Թեև ԱՄՅՆ-ն կարող է պատասխանատվություն չկրել ԸԲՄԾ-ի վերապատրաստումների ծրագրի մշակման համար, օգտակար կլինի, որ նրանք աշխատեն ծառայությունների հետ՝ ԱՄՅՆ-ի և այլ գերատեսչությունների հետ համատեղ հմտությունների երաշխավորման ավելի պաշտոնական միջոցով:

Միաժամանակ կարելի է օգտագործել արդեն իսկ առկա ռեսուրսները: Արդեն մշակված ԸԲՄԾ-ի համար: Ուղեցույց-ձեռնարկը (Մաթոսյան Մ և այլք, 2022թ.) կարող է վերանայվել և ավելի ֆորմալացվել, որպեսզի ԱՄՅՆ-ն հավաստիանա ԸԲՄԾ-ի անձնակազմի վերապատրաստման նկատմամբ անկախ վերահսկողության մասին: Ինչպես նշվեց, այն կարող է տրամադրվել նաև անկախ փորձագետի կամ կազմակերպության կողմից:

5.Դիտարկել ՀԿ-ների կարողությունների զարգացման ուղիները: Օրինակ՝ աջակցություն դրամահավաքի, կառավարման և վերապատրաստման միջոցով

ԱՄՅՆ-ի տեսանկյունից ԸԲՄԾ-ի կողմից օգտագործվող աշխատանքային մոդելը բարելավելու ուղիներ փնտրելիս պետք է հաշվի առնել ԸԲՄԾ-ի ՀԿ-ների առջև ծառացած տարբեր մարտահրավերներն ու կարողությունները: Դրանց կատարելագործումը հնարավոր դարձնելու հիմնական միջոցը նրանց աջակցելու և նրանց կարողությունները զարգացնելու եղանակների ուսումնասիրությունն է: Ոչ բոլոր ՀԿ-ներն են կարողանում բավարարել բոլոր պահանջները, սակայն աջակցության և կարողությունների զարգացման

դեպքում դա կարող է բարելավվել:

Այս աջակցությունը կարող է տրամադրվել տարբեր եղանակներով, և կարևոր է նկատի ունենալ, որ ԱՍՀՆ-ն միակ պետական գերատեսչությունը չէ, որը կարող է նպաստել դրան: Օրինակ, վերապատրաստումը և հավատարմագրումը կարող են իրականացվել կրթության ոլորտի պատասխանատուների կամ համալսարանների ու կրթական հաստատությունների կամ այլ ՀԿ-ների ռեսուրսների օգնությամբ: Սա ներառում է ոչ միայն ԸԲՄԾ որակավորման համար ուսուցում, այլև նաև բիզնեսի և կառավարման/մենեջմենտի հմտությունների ձևավորում: Փաստերը վկայում են, որ դրանք հմտություններ են, որոնցից հաճախ զուրկ են փոքր ՀԿ-ները: Այլ գերատեսչությունների նման ներդրումները կհամապատասխանեն Ստամբուլի կոնվենցիային (հոդված 15):

Ինչպես ԸԲՄԾ-ի, այնպես էլ այլ շահագրգիռ կողմերի հետ անցկացված քննարկումները ցույց են տվել, որ մասնագիտացված ծառայության պահանջվող չափորոշիչներին հասնելու հիմնական խնդիրներից մեկը ծառայությունների մատուցման համար համապատասխան, անվտանգ և տրավմատիկացված միջավայր ապահովելն է: Արժեք մտածել, թե արդյոք մեկ այլ պետական գերատեսչություն կարող է տրամադրել նման միջավայր, կամ տարածաշրջանային մասնագետների ծառայությունը կարող է հիմնվել կամ համատեղ տեղակայվել արդեն ապահով և հարմար վայրում:

Աշխատանքի մեկ այլ մոդել, որը կարելի է դիտարկել դա ԸԲՄԾ-ի մասնագետների տեղակայումն է այլ ծառայությունների տարածքում: Օրինակ, Դուլուբի մոդելը, որն ի սկզբանե մշակվել է ԱՄՆ Միլենտոա Նահանգում, համատեղ տեղակայում է Նախատեսում ընտանեկան բռնության մասնագետ(ներ)ի համար այլ ծառայությունների շենքերում, ինչպիսին է օրինակ ոստիկանությունը: Այս մոդելը ավելի խորությամբ կուսումնասիրվի ստորև ներկայացված միջգերատեսչական համագործակցության առաջարկության շրջանակներում:

6. Դիտարկել ՀԿ-ների համար պայմանագրի մեկ տարուց ավել երկարացումը՝ հնարավորություն տալով նրանց նախօրոք բյուջե կազմել և ունենալ ավելի ամուր ֆինանսական երաշխիք իրենց աշխատանքի համար

Այս առաջարկությունը գործում է ԸԲՄԾ-ում կարողություններ ձևավորելու վերը նշված առաջարկության հետ զուգակցված: Այն կարևոր է աջակցության ծառայություններին հնարավորություն ընձեռելու բարելավել իրենց կողմից ծառայությունների մատուցումը՝ ընդլայնելով իրենց սահմանափակ ռեսուրսները և ապահովելով դրանք ծառայությունների որակյալ մատուցմանն ուղղելուն:

Այնուամենայնիվ, նման ընդլայնումը պետք է աշխատի ծառայությունների կողմից հաշվետվողականության և որակի բարձրացման այլ միջոցների մշակմանը զուգընթաց, ինչպիսիք են հավատարմագրումը և մշտադիտարկումը: Այն կարող է հնարավորություն ընձեռել ԱՍՀՆ-ին ծառայություններն այլ ձևերով մանրակրկիտ ուսումնասիրելու և գնահատելու համար:

7. Ֆինանսավորման վերաբերյալ որոշումներ կայացնելիս հաշվի առնել յուրաքանչյուր տարածաշրջանի ժողովրդագրական, աշխարհագրական և մշակութային որոշակի մարտահրավերները

Սույն գեկույցի շրջանակներում ԱՍՀՆ-ի առանցքային հայցումներից մեկն այն էր, որ անդրադարձ կատարվեր այն փաստին, որ ԸԲՄԾ-ի համար առկա կարիքները և/կամ ծառայությունների մատուցումը մարզերի մի մասում տարբերվում է մյուսներից թեև յուրաքանչյուր ծառայություն ստանում է ֆինանսավորման նույն մակարդակը: Սա ընդգծում է վիճակագրական և որակական մշտադիտարկման վրա հիմնվելու կարևորությունը

(տես 1 և 2 առաջարկությունները): Համապատասխան ծառայություններ մատուցելու համար ԸԲՄԾ-ի կարողությունների մասին հատվածը ցույց է տալիս տարբեր տարածաշրջաններում կարիքների բարդությունները և յուրաքանչյուր տարածաշրջանում ԸԲՄԾ-ի նկատմամբ տարբեր պահանջները:

Կարիքների գնահատմամբ՝ կարևոր է տարբեր մարզերում սոցիալական խնդիրների լուծման նպատակով նպաստների տրամադրումը: Այս նպատակով կարող է օգտակար լինել գնահատման համակարգը՝ օգտագործելով, օրինակ, աղքատությունը կամ գյուղական մեկուսացումը որպես կարողությունների վրա ազդեցություն ունեցող գործոններ: Յուրաքանչյուր տարածաշրջանի վերլուծությունը կօգնի գնահատել առանձին տարածաշրջանային ծառայությունների կարողությունները: Եթե այս վերլուծությունը մանրակրկիտ լինի, ապա ԱՄՀՆ-ն՝ որպես պատվիրակող մարմին, կարող է դիտարկել որոշ տարածաշրջանային ծառայությունների ավելի մեծ ֆինանսավորում ստանալու անհրաժեշտությունը, քան մյուսներինը, որտեղ ծառայությունները կարող են ծախսերի խնայողություն կատարել համատեղ մատուցման միջոցով:

Տարբեր տարածաշրջանների վերաբերյալ տվյալների հավաքագրման հետագա եղանակը կարող է իրականացվել տարածաշրջանային և ազգային մակարդակով հետազոտությունների միջոցով, ինչպիսին է Բոսնիա և Հերցեգովինայի հետազոտությունը: Նման ուսումնասիրությունները ոչ միայն թույլ կտան բարելավել յուրաքանչյուր տարածաշրջանի կոնկրետ մարտահրավերների պատկերը, այլև կբացահայտեն ընտանեկան բռնության իրական չափերը յուրաքանչյուր տարածաշրջանում և ազգային մակարդակում: Կարող է օգտագործվել ցանկացած նախկին հետազոտություն, սակայն ԱՄՀՆ-ի կողմից ղեկավարվող և բազմամասնագիտական շրջանակով հետազոտությունները ավելի կենտրոնացված տվյալներ կներկայացնեն տարածաշրջանների կարիքների և կարողությունների վերաբերյալ:

8. Կարևոր է մշակել հստակ միջգերատեսչական համագործակցության գործելակարգեր, որոնք շարունակաբար գնահատում են ռիսկերը և կարիքները

9. ԸԲՄԾ-ի քարտեզագրումը ցույց տվեց, որ սկզբունքորեն այս համատեղ աշխատանքի մի մասն արդեն գծագրվել է ոստիկանության և ԸԲՄԾ-ի կողմից: Դրա վրա հիմնված գործողությունների համապարփակ ծրագիրը, այլ ծառայությունների ավելի ակտիվ ներգրավումը կարող է լինել ԸԲՄԾ-ի կարողությունների բարելավման առանցքային միջոց

Սույն զեկույցի վերաբերյալ քննարկումը ցույց տվեց, որ ԸԲՄԾ-ի զոհերին աջակցելու ճանապարհին ծառացած ամենամեծ մարտահրավերներից մեկը նրանց աշխատանքային հարաբերություններն են այլ գերատեսչությունների և, մասնավորապես, ՄՍԾ-ի հետ: Ինչպես ավելի վաղ նշվեց, նման իրադրությունը բնական է, հատկապես երբ ԸԲՄԾ-ն համեմատաբար նոր է սկսում գործել: Այս հարաբերությունների բարելավումը միջգերատեսչական գործընկերության միջոցով կհանգեցնի աջակցության ծառայությունների և զոհերի հետ նրանց աշխատանքի արդյունքների տեսանելի բարելավմանը, կնվազեցնի ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը և սկզբունքորեն կստեղծի կարողություններ այլ ծառայություններում, օրինակ՝ ՄՍԾ-ում, զոհերի կարիքների ապահովման համար:

Գործնական օրինակ. լատվիական ծրագիրը՝ «Մեկ քայլ ավելի մոտ. համակարգված համայնքային արձագանք կանանց նկատմամբ բռնությանը»

ԸԲՄԾ-ի և Լատվիայում ընտանեկան բռնության զոհերի հետ աշխատող այլ ծառայությունների միջև համագործակցության ուղղությամբ առկա մարտահրավերների դիմակայման և համակարգման բացակայության շտկման համար մշակվել է բազմաոլորտ, զոհակենտրոն և ստանդարտացված համագործակցության մոդել: Դրա նպատակն էր խրախուսել զոհերին օգնություն հայցել և խուսափել կրկնակի զոհականացումից:

Մոդելը, որն ի սկզբանե փորձարկվել էր երկրի մեկ մարզում, ներառում էր հետևյալը.

- Մշակվել է ռիսկերի գնահատման հարցաթերթ, որը համաձայնեցվելուց հետո օգտագործվել է ոստիկանության, ԸԲՄԾ-ի, սոցիալական ծառայությունների և այլ գերատեսչությունների կողմից:
- Ստանդարտացված համագործակցության մշտադիտարկման համակարգ է մշակվել գերատեսչությունների կողմից առանձին դեպքերին հետևելու համար, ներառյալ տարբեր ներգրավված կառույցների կողմից զոհերին տրամադրվող միջամտությունները:

Պիլոտային մարզում գրանցվել է այս համատեղ աշխատանքի արդյունքում ուղղորդումների և դեպքերով աշխատանքի արդյունավետության աճ: Այն ողջունվեց մասնակիցների կողմից, քանի որ ստանդարտացված ռիսկի գնահատումն օգնեց խուսափել աշխատանքի կրկնությունից և ավելի ճշգրիտ տեղեկատվություն ստանալ:

Արդյունքում, ռիսկերի գնահատման ստանդարտացված ձևանմուշն օգտագործվում է ազգային մակարդակով:

Քննարկումը փաստել է, որ Հայաստանում նման աշխատանք է իրականացվել ոստիկանության և ԸԲՄԾ-ի կողմից: Հնարավորություն կա օգտագործելու ԸԲՄԾ-ի և ոստիկանության միջև արդեն իսկ ստեղծված համագործակցությունը՝ համատեղ ռիսկերի գնահատման, տվյալների և գիտելիքների ու փորձի փոխանակման ավելի լայն միջգերատեսչական համագործակցություն ձևավորելու համար: Սա կարող է պիլոտային եղանակով կիրառվել մեկ տարածաշրջանում և անհրաժեշտության դեպքում կարող է ներառել ավելի ռազմավարական մակարդակով միջգերատեսչական քննարկման հարթակ, որտեղ կներառվի ԱՍՀՆ-ն:

Գործնական օրինակ. MARAC մոդելը

MARAC-ն առաջին անգամ փորձարկվել է Ուելսի Քարդիֆ քաղաքում, իսկ այժմ հարմարեցված է և կիրառվում է եվրոպական շատ երկրներում: MARAC-ը միջգերատեսչական ռիսկի գնահատման աշխատաժողով է որը հավաքվում է սովորաբար երկու շաբաթը մեկ անգամ: MARAC-ը նախատեսված է արագ արձագանքելու ընտանեկան բռնության զոհերին, ովքեր վնասվածք ստանալու կամ մահվան բարձր ռիսկի տակ են: Հիմնական ներգրավված կառույցները, ինչպիսիք են ոստիկանությունը, սոցիալական ծառայությունները, առողջապահական ծառայությունները, երեխաների պաշտպանության ծառայությունները և ՀԿ-ները, բոլորը մասնակցում են և օգտագործում են

ռիսկերի գնահատման ընդհանուր մոտեցումներ: Միավորներ են հատկացվում գնահատելու ռիսկը, և ուղղորդում է կատարվում հաջորդ MARAC-ին, եթե այն հասնում է բարձր ռիսկային շեմի, կամ եթե մասնագիտական գնահատմամբ զոհը գտնվում է բարձր ռիսկային գոտում:


MARAC-ը կառավարվում է ոստիկանության կողմից, իսկ առանցքային դերն իրականացնում է Շնտանեկան բնության դեմ պայքարի անկախ համակարգողը (ընտանեկան բնության գծով մասնագետ): Այս դերը սովորաբար կատարում է մասնագիտացված ՀԿ-ի մասնագետը, ով աջակցում է զոհին քրեական արդարադատության համակարգում ընթացող գործերով: Նրա անկախությունը կանոնադրական մարմիններից նրան հնարավորություն է տալիս նվաճել զոհի վստահությունը: MARAC-ի հանդիպմանը մասնակցում են ներգրավված գերատեսչությունները, և դա մի հարթակ է, որտեղ նրանք կիսվում են ռիսկի վերաբերյալ գիտելիքներով և համաձայնեցնում են այդ ռիսկը կառավարելու գործողությունները: Չոհի անվտանգությունը առաջնային է:

MARAC մոդելը չափազանց ազդեցիկ է որպես համակարգված, միջգերատեսչական արձագանք ընտանեկան բնության դեպքերին: Բազմաթիվ տարածաշրջաններ նմանատիպ մոդել են կիրառել այն զոհերի համար, ովքեր չեն գնահատվում որպես բարձր ռիսկայնության գոտում գտնվող, սակայն, այնուամենայնիվ, խոցելի են և այն պարագայում երբ համաձայնեցված են միջամտությունների շրջանակը՝ ռիսկի աճը կանխելու համար: Այս մոդելը նշանակում է, որ գործելակարգերը ներկայացվում են, ռիսկերը քննարկվում են, գործողությունները համաձայնեցվում են, և գերատեսչությունները շարունակաբար աշխատում են միասին: Բացի այդ, սա մի մոդել է, որտեղ բոլոր գերատեսչությունները պատասխանատվություն են կրում զոհերի անվտանգության և վերականգնման ապահովման համար:

Ստորև որպես դեպքի ուսումնասիրություն ներկայացված է MARAC մոդելին նման օրինակ, սակայն աջակցության կենտրոնացումով տեղական համայնքի համատեքստում և նպատակ ունենալով կանխել դեպքերի բարձր ռիսկայնության աճը: Այն ընդունվել է Մոլդովայի Հանրապետությունում և կարող է դիտվել որպես տարածաշրջանային/ տեղական բազմակողմանի միջամտության մոդել ներդրված տեղական մակարդակում:

Դեպքի ուսումնասիրություն

Դեպքի ուսումնասիրությունը վերաբերում է մեկուսացված գյուղական տարածքում բնակվող կնոջ: Նրա ամուսինը չափազանց դաժան էր, և հարևանները երկու անգամ դիմել էին ոստիկանություն: Նա չունեւր տեղաշարժվելու միջոց օգնության դիմելու համար և չէր վստահում որևէ ծառայության: Նրա 2 երեխաները սովորում էին տարրական դպրոցում, և մեծ տղան կանոնավոր չէր հաճախում դպրոց: Նա մնում էր տանը՝ մորը պաշտպանելու համար: Ոստիկանությունը կնոջն ուղղորդեց տեղական ԸԲՄԾ, որն օգնեց տրանսպորտով, և որտեղ նա կարողացավ վստահություն և որոշակի համոզմունք ձևավորել, որ ամեն ինչ կարող է փոխվել: Իրավիճակին անդրադարձ է կատարվել միջգերատեսչական հանդիպման ընթացքում, որը տեղի էր ունենում ամեն շաբաթ, առցանց կամ դեմ առ դեմ, և նա պարբերաբար տեղեկացվում էր համաձայնեցված գործողությունների մասին:



Վստահություն ձևավորելով տեղական ԸԲՄԾ-ի շարունակական մասնագիտացված աջակցության միջոցով, նա ի վերջո վստահություն ձեռք բերեց ոստիկանությանը հաղորդում տալու համար, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ պատասխանատվության ենթարկել բռնարարին:

Սոցիալական ծառայությունների և դպրոցի ներգրավումն այս դեպքում օգնեց ապահովել երեխաների անվտանգությունը: Բոլոր ներգրավված գերատեսչությունները կրում էին պատասխանատվություն և կար բացարձակ հստակություն նրանց տարբեր պարտականությունների վերաբերյալ: Այս մոդելը կարող է ընդլայնվել՝ ներառելով մի շարք այլ գերատեսչություններ, ինչպիսիք են առողջապահությունը, զբաղվածությունը, բնակարանային ծառայությունները կամ այլ համայնքային ՅԿ-ներ:

Կանոնավոր տեղեկատվության տրամադրումը և համաձայնեցված գործողությունները, ինչպես նաև այս կնոջ համար տրանսպորտի հետ կապված մարտահրավերների գիտակցումը նշանակում էր, որ միջգերատեսչական արձագանքն օգնեց նրան և իր երեխաներին ապահով միջավայր տեղափոխել: Այս դեպքի ուսումնասիրության օրինակը հեշտությամբ կարող է հարմարեցվել ազգային և տարածաշրջանային կարիքներին և առաջարկում մի մոդել, որը կարող է օգտագործվել տեղական մակարդակում:

Համատեղ տեղակայման մոդել. Դուլուֆ Մասաչուսեթս

Ընտանեկան բռնության աջակցության ծրագիրը, որն ի սկզբանե մշակվել է ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահագի Դուլուֆ քաղաքում, ընդունվել և հարմարեցվել է տարբեր ձևաչափերով և գլոբալ ազդեցություն է ունեցել ընտանեկան բռնության զոհերի հետ միջգերատեսչական աշխատանքի մոդելների վրա: Ինչպես վերը նշված օրինակները, այն նույնպես հիմնված է ընտանեկան բռնության զոհերին համայնքի համակարգված արձագանքի վրա՝ կանոնավոր բազմաոլորտ հանդիպումներով, ռիսկերի գնահատման ընդհանուր ձևանմուշներով և պաշտոնապես համաձայնեցված գործողություններով:

Դուլուֆում նաև մշակվել է համատեղ տեղակայման մոդելը: Ի սկզբանե, այն ներառում էր ընտանեկան բռնության մասնագետի կանոնավոր տեղակայում ոստիկանության

շենքում: Մոդելը նշանակում է, որ թեև ԸԲՄԾ-ը մնում է անկախ, մասնագետը, ուստիականական բաժանմունքում կամ տարածքներում կես դրույքով գտնվելով նպաստում է դեպքերի ճիշտ ըմբռնմանը, ուժեղացնում է հաղորդակցությունը և նպաստում է ժամանակին արձագանքմանը: Սրան նպաստում են միջգերատեսչական պարբերական հանդիպումները, ինչպես MARAC-ի դեպքում:

Համատեղ տեղակայումն այսօր մշակվել է մի քանի եղանակներով: Կան ԸԲՄԾ աշխատակիցների համատեղ տեղակայման օրինակներ առողջապահական հաստատություններում (REF), բնակարանային բաժիններում և սոցիալական ծառայություններում: Համատեղ տեղակայումը կարող է օգտակար միջոց լինել գոյություն ունեցող ռեսուրսները համեմատաբար ցածր ծախսերի օգտագործմամբ համապատասխանեցնելու համար, ունիներուժ՝ զգալիորեն նվազեցնելու ռիսկը արձագանքի բարելավման միջոցով և օգնում է ամուր միջգերատեսչական հարաբերությունների կառուցմանը:

Համատեղ տեղակայման մեկ այլ մոդել է այլ գերատեսչությունների տեղակայումը ԸԲՄԾ-ում՝ որոշակի ժամանակահատվածով: Սա այժմ շատ երկրներում հաստատված գործելակերպ է: Օրինակ, սոցիալական աշխատանքի ուղղությամբ ուսուցման ընթացքում մի քանի շաբաթով պատրաստվող մասնագետի տեղակայումը ԸԲՄԾ-ում ապահովում է ապագա սոցիալական աշխատողների համար պրակտիկ ուսուցում և գիտելիքներ: Մի շարք երկրներում, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայում և Նիդեռլանդներում, սա կարևոր միջոց է դարձել, որով ուսուցման փուլում գտնվող սոցիալական աշխատողները կարող են սովորել ընտանեկան բռնության բարդ դինամիկայի և ազդեցության մասին:

**10. Ուղեցույցների համապարփակ փաթեթ, որը պետք է մշակվի որպես ՄՄԾ-ի և համայնքային սոցիալական աշխատողների վերապատրաստման գործիք:
Այն պետք է ներառի ուսուցում գենդերային բռնության, տրավմատիկ ագրեսիայի
մոտեցումների և ընտանեկան բռնության մի շարք ազդեցությունների
վերաբերյալ իրազեկվածության բարձրացման թեմաներով**

Գործնական օրինակ՝ Մոլդովայի Հանրապետություն

2024 թվականի ապրիլին Մոլդովայի Հանրապետությունում գործարկվել են Պետական սոցիալական աշխատողների ուղեցույցները: Սրանք Եվրոպայի խորհրդի և Աշխատանքի և սոցիալական պաշտպանության Նախարարության համատեղ ջանքերի արդյունք են: Դրանք համապարփակ ուղեցույցներ են՝ հարմարեցված կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեպքերը կանխելու, դրանցից պաշտպանելու և միջամտելու հիմնական հմտություններով սոցիալական աշխատողներին հզորացնելու համար: Նրանք նաև հնարավորություն են տալիս սոցիալական աշխատողներին հասկանալու գենդերային տեսանկյունի կարևորությունը, վստահության ձևավորումը և ինչպես խուսափել զոհերին մեղադրելուց և իրենց աշխատանքում գենդերային կարծրատիպերից: Ուղեցույցները հավաքական ջանքերի մի մաս են՝ ընտանեկան բռնությանը բազմամասնագիտական տեսանկյունից: Ուղեցույցները ծառայում են որպես ուսումնական նյութեր, և Նախատեսվում է, որ դրանք կներառվեն համայնքային սոցիալական աշխատողների բոլոր անհրաժեշտ վերապատրաստումների մեջ:

Սա գործնական օրինակ է, որի միջոցով զարգացվում են միջգերատեսչական աշխատանքի, համատեղ ուսուցման և համայնքային սոցիալական աշխատողների պրակտիկայի և վստահության ձեռքբերմանն ուղղված կարողությունները:

Հնարավոր է նաև դիտարկել ռիսկերի և կարիքների գնահատման ձևանմուշ և նմանատիպ այլ գործիքներ մշակելու հնարավորությունը, որոնց ուղղությամբ կարելի է աշխատել ԸԲՄԾ-ի և այլ գերատեսչությունների հետ խորհրդակցելով, ինչպիսիք են ոստիկանությունը, առողջապահությունը և կրթությունը: Կառավարման մակարդակով սա կարող է իրականացվել, որպես պահանջվող գործողություն, ընտանեկան բռնության վերաբերյալ սոցիալական աշխատողների վերապատրաստմանը զուգահեռ: Այն կարող է դիտարկվել որպես սոցիալական աշխատանքի ուսուցման էական տարր, և ծրագիրը պետք է լինի շարունակական՝ ապահովելու մասնագետների համապատասխան վերապատրաստումը: Կարելի է նաև դիտարկել սոցիալական աշխատողներին որոշ ժամանակով ԸԲՄԾ կենտրոններում տեղակայելը՝ իրենց վերապատրաստման շրջանակում, ինչպես վերևում նշվել է համատեղ տեղակայման բաժնում:

Այս վերապատրաստման ռեսուրսը կարող է հարմարեցվել նաև այլ գերատեսչությունների վերապատրաստման համար, ինչպիսիք են առողջապահությունը, քրեական արդարադատությունը և բնակարանային ծառայությունները: Վերջինիս դրական կողմն այն կլինի, որ ուսումնական ռեսուրսի մշակումն ու ներդրումը կխթանի միջգերատեսչական համագործակցությունը: Դա նաև կբարձրացնի սոցիալական աշխատողների վստահությունը ընտանեկան բռնության զոհերի հետ աշխատանքի նկատմամբ:

11. Աշխատաժողովի անցկացում ԸԲՄԾ -ի և այլ գերատեսչությունների մասնակցությամբ, ինչպիսիք են առողջապահությունը, ՄՍԾ-ն, ոստիկանությունը, բնակարանային և զբաղվածության ծառայությունները, որպեսզի հստակություն մտցվի ընտանեկան բռնության զոհերի հետ միջգերատեսչական աշխատանքի վերաբերյալ

Այս վերջնական առաջարկության նպատակն է սույն զեկույցում ներկայացված մյուս առաջարկությունների համար հարթակի ապահովումը և մշակումը: Չեկույցի մշակման նպատակով անցկացված քննարկումները ցույց տվեցին, որ Հայաստանում կան որոշ դրական օրինակներ՝ աշխատանքային խմբերի ձևավորման տեսքով՝ ռազմավարական և գործնական մակարդակներում: Սա առանցքային է եղել ներկայիս ԸԲՄԾ-ի մոբիլիզացման և զարգացման համար: Առաջարկվում է ապահովել դրա պաշտոնականացումը և շարունակականությունը, որպեսզի շարունակվի գիտելիքների փոխանցումը և խնդիրների լուծումը: Հայաստանում օրենսդրական փոփոխությունները և ԸԲՄԾ -ի ստեղծումը նշանակում են, որ կան հետագա դրական զարգացման շատ հնարավորություններ, ինչը կարող է բարելավել ԸԲՄԾ-ի կատարողականը և հնարավորություն տալ ներկայացնել նրանց աշխատանքը ու մտորել դրա շուրջ:

Եզրակացություն

Ուրտային օրենսդրության փոփոխությունների ընդունումը Հայաստանում շրջադարձային պահ է ընտանեկան բռնության գոհերին աջակցելու և բռնարարներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ երկրի դրական առաջընթացում: ԱՍՀՆ-ի, ԸԲՄԾ-ի և այլ հիմնական շահագրգիռ կառույցների համատեղ աշխատանքը վկայում է նորարարության և կատարելագործման զգալի ներուժի առկայության մասին: ԱՍՀՆ-ն աշխատել է Ստամբուլի կոնվենցիայի սկզբունքների համաձայն՝ ներառելով և զարգացնելով կարողությունները տարածաշրջանային ՀԿ-ներում և հնարավորություն տալով այդ կազմակերպություններին իրենց ձայնը հնչեցնել ռազմավարության մշակման մակարդակում: Ավելին Եվրոպայի խորհրդի նվազագույն չափորոշիչները հիմք են ծառայել մշտադիտարկման և որակի ստուգումների համար և ինտեգրվել են ԸԲՄԾ -ի աշխատանքում:

Չարգացնելով ԸԲՄԾ-ն կանանց տեղական և տարածաշրջանային ՀԿ-ների հետ աշխատանքի միջոցով, ԱՍՀՆ-ն հնարավոր է դարձրել մասնագիտական և անկախ գործունեությունը, ինչը նշանակում է, որ կա ավելի մեծ հավանականություն, որ գոհերը կվստահեն առաջարկվող աջակցությանը և օգնություն կհայցեն: Այս ցանցի ստեղծումը վերջերս է տեղի ունեցել, և մշտադիտարկման և որակի առումով առկա են զգալի մարտահրավերներ: Ավելին, դրանք չեն կարող հասցեագրվել առանձին -առանձին, հետևաբար, զեկույցը զգալի ուշադրություն է դարձրել ԸԲՄԾ-ների և այլ շահագրգիռ կողմերի միջև միջգերատեսչական հարաբերությունների բարելավման անհրաժեշտությանը: Այնուամենայնիվ, այս զեկույցի համար իրականացված հետազոտությունը վկայում է ԱՍՀՆ-ի, ԸԲՄԾ-ի և այլ գերատեսչությունների կողմից ընտանեկան բռնության գոհերի հետ կապված գործելակերպերի և դրանց արդյունքների բարելավման մեծ հանձնառության մասին:

Օգտագործված նյութեր

Եվրոպայի խորհուրդ (2008թ.), Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքար. աջակցության ծառայությունների նվազագույն չափորոշիչներ

Եվրոպայի խորհուրդ (2011թ.), Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիային ուղղված բացատրական զեկույց

Եվրոպայի խորհուրդ (2018թ.), Ստամբուլի կոնվենցիայի չափանիշներին համապատասխան կանանց նկատմամբ բռնության գոհերի համար աջակցության ծառայությունների քարտեզագրում. մեթոդաբանություն և գործիքներ

Եվրոպայի խորհուրդ (2020թ.), Ստամբուլի կոնվենցիայի վավերացման և իրականացման ուղղությամբ առաջխաղացում. պետությունների լավ գործելակերպերը

Empower (2016թ.), Ընտանեկան բռնության դեմ պայքարի լավագույն գործելակերպը. Եվրոպա և ԱՄՆ, հասանելի է՝ <http://www.empowerproject.eu/>

Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ (2015թ.): Ընտանեկան բռնության կանխարգելում. Արդյունավետ գործելակերպեր, հասանելի է՝ <https://eige.europa.eu/publications/preventing-domestic-violence-good-practices>

Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ (2016թ.): Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վարչական տվյալների հավաքագրում. Արդյունավետ գործելակերպեր, հասանելի է՝ <https://eige.europa.eu/publications/administrative-data-collection-violence-against-women-good-practices>

Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն (2014թ.), Կանանց նկատմամբ բռնություն. հետազոտություն ամբողջ ԵՄ-ում, հասանելի է՝ <https://fra.europa.eu/en/publication/2014/violence-against-women-eu-wide-survey-main-results-report>

Եվրոպական Միության հիմնարար իրավունքների գործակալություն (2014թ.), «Կանանց նկատմամբ բռնություն. ԵՄ-մասշտաբային հարցում», հասանելի է՝ <https://fra.europa.eu/en/publication/2014/violence-against-women-eu-wide-survey-main-results-report>

Ա.Գեդես, Ս.Բոտտ, Կ.Գարսիա-Մորենո, Մ.Կոլմբինի, (2016թ.): Կամրջելով բացերը. Կանանց նկատմամբ բռնության և երեխաների նկատմամբ բռնության միջև հատումների զլորբալ վերանայում: Համաշխարհային առողջապահական գործողություն, հատոր 9:1

Ռ.Կաբիր և Ջ.Խան (2019թ.), «Համատեղ ուսումնասիրություն՝ Հայաստանում զուգընկերոջ կողմից բռնությունը և կանանց հզորացման խոչընդոտները բացահայտելու համար», Hindawi հրատարակություն

Ս. Խաչատրյան (2023թ.), «Նրանք, ովքեր բարձրաձայնում են». Ընտանեկան բռնության դեմ պայքար», EVN զեկույց, հասանելի է՝ Those Who Speak Up: Combating Domestic Violence - EVN Report

Ր.Լոգար և Բ.Վարգորվա (2015թ.), «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ բազմազերատեսչական համագործակցություն», Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ

Մ.Մաթոսյան, Ջ.Գևորգյան և Ա.Զիլոյան (2022թ.), «Սոցիալական աշխատողի

պրակտիկայի ուղեցույց. Ընտանեկան բռնության մասին իրազեկության բարձրացում», Կանանց աջակցման կենտրոն, Երևան

Լատվիայի սոցիալական պաշտպանության Նախարարություն (2019թ.), «Մեկ քայլ ավելի մոտ. Համայնքային համակարգված արձագանք կանանց նկատմամբ բռնությանը» ծրագրի ամփոփում, հասանելի է լատվիերենով՝ <https://www.lm.gov.lv/lv/projekts/projekts-soli-tuvak-kopienas-vienota-atbilde-uz-vardarbibas-pret-sievietem-gadijumiem>

Կ.Սեգար (2013թ.), «Բոսնիա և Հերցեգովինա Դաշնությունում ընտանեկան բռնության պատճառների վերաբերյալ հետազոտություն», Gender Centar, Սարայեվո

Մ.Շեփերդ և Է.Փենս, «Ընտանեկան բռնությանը համայնքային արձագանքների համակարգում. Դասեր Դուլութից: Կանանց նկատմամբ բռնության մասին» SAGE շարք, հատոր 12, Դուլութ, ԱՄՆ-կանայք

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ (2022թ.), Սեռով պայմանավորված կանանց և աղջիկների սպանություններ(ֆեմիցիդ, կնասպանություն).2021 թ-ին մասնավոր ոլորտում կանանց և աղջիկների՝ սեռով պայմանավորված սպանությունների գլոբալ գնահատականներ. տվյալների բարելավում արձագանքման բարելավման համար, Նյու Յորք

ՄԱԿ-Կանայք (2015թ.), Բռնության ենթարկված կանանց և աղջիկների համար հիմնական ծառայությունների փաթեթ, հասանելի է՝ <https://www.unfpa.org/essential-services-package-women-and-girls-subject-violence> Essential Services Package for Women and Girls Subject to Violence (unfpa.org)

Կանանց ռեսուրսային կենտրոն (2011թ.), Կանանց կամավորական և համայնքային կազմակերպությունների արտակարգ ազդեցության ցուցադրումը, հասանելի է՝<https://www.wrc.org.uk/hidden-value-demonstrating-the-extraordinary-impact-of-womens-voluntary-community-organisations-2011>

Կանանց համաշխարհային տնտեսական ֆորում (2022թ.), «Ահա թե ինչու կանայք պետք է ավելի մեծ դեր ունենան համաշխարհային տնտեսության մեջ», հասանելի է՝ <https://www.weforum.org/stories/2018/01/this-is-why-women-must-play-a-greater-role-in-the-global-economy/>

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2013թ.), Կանանց նկատմամբ բռնության համաշխարհային և տարածաշրջանային գնահատականները. Չուզընկերոջ կողմից բռնության և զուգընկեր չհանդիսացողի կողմից սեռական բռնության տարածվածությունը և առողջության համար հետևանքները, հասանելի է՝ <https://www.who.int/publications/i/item/9789241564625>

Ուլրիկե Չիմեր (2023թ.), Կոնֆլիկտների և ռազմականացման ազդեցությունը Հայաստանի կանանց և ԼԳԲՏ անձանց կյանքի վրա, Caucasus Analytical Digest, 134, 7-11, Լեյքնից

Ձեկույցը ամփոփ կերպով ներկայացնում է Հայաստանում ընտանեկան բռնության մասնագիտացված աջակցության ծառայությունները՝ անդրադառնալով ծառայությունների հավաքական կարողություններին, ներգրավված կառույցների միջև համագործակցությանը և առաջարկություններ է կատարում բարելավման և կարողությունների զարգացման ուղղությամբ: Վերլուծությունը հիմնված է Եվրոպայի խորհրդի աջակցության ծառայությունների նվազագույն չափորոշիչների և միջազգային ստանդարտների, մասնավորապես Ստամբուլի կոնվենցիայի վրա: Ուսումնասիրությունը առաջարկում է նաև այլ երկրների լավագույն փորձի օրինակներ՝ Հայաստանում ընտանեկան բռնության գոհերի մշակութային և ժողովրդագրական կարիքներին համապատասխանեցնելու և տեղայնացնելու համար:

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի
առաջատար իրավապաշտպան
կազմակերպությունն է: Այն միավորում է 46
անդամ պետություն՝ ներառյալ Եվրամիության
բոլոր անդամները: Եվրոպայի խորհրդի
մասնակից բոլոր պետությունները ստորագրել
են Մարդու իրավունքների եվրոպական
կոնվենցիան, որը միտված է մարդու
իրավունքների, ժողովրդավարության և
օրենքի գերակայության պաշտպանությանը:
Մարդու իրավունքների եվրոպական
դատարանը վերահսկում է մասնակից
պետություններում Կոնվենցիայի
իրավակիրառումը: